ՍԻՈՆ

ԱՄԱՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

Ի. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ 1946

"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in

JERUSALEM — PALESTINE

digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

		Երես
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		
— Վարագայ խաչը.	ԽՄԲ.	177
ԿՐՕՆԱԿԱՆ		
— Դարձ դէպի լուսաւոր կեանքը.	Գ. Կ.	180
— Ուրդի Մարդոյ	Թրգմ. ՀԱՅՐԻԿ ՎՐԴ.	183
ԵԿԵՂԵՑԱՊԱՏՄԱԿԱՆ		
— Էջմիածին եւ Ազգամար.	Ն. Վ. Գ.	184
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ		
— Պատգամը.	Ե. ՕՇԱԿԱՆ	189
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ		
— Բաբգենի մատանին.	Կ. Բ.	193
ՊԱՏՄԱԿԱՆ		
— Կիլիկեան ամրոցներ, Կոռիկոս.	Թրգմ. ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ	194
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ		
— Արաբական ազդեցութիւնը հայերէնի վրայ.	ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ	198
Արձանագրութիւններ Ազգային–Եկեղեցական ժողովի.		203
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ		
— Հ. Բ. Ը. Միութեան հիմնադրութեան քառասնամեայ յոբելեանը եւ հանգանակութիւն.		207
— Եկեղեցական եւ բեմական եւ այցելութիւնք.		208

ԹԱԺՆԵԳԻՆ

ՍԻՈՆի Տարեկան բաժնեգինն է՝ բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 6 կամ մէկ ու կէս Ամերիկեան Տոլար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ է

Հասցէ՝ *Rédaction de la Revue Arménienne SION*

Patriarcat Arménien, Jérusalem-Palestine

digitised by A.R.A.R.@

ՍԻՈՆ

Ի. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1946 ՀՈԿՏԵՄԲԵՐ 10

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐԱԳԱՅ ԽԱՉԸ

Մեր առջև ունինք Խաչի երկու տօներ, Խաչվերացը և Վարագայ Խաչը, մին համաքրիստոնէական և միւս իր պարագայովը՝ զուտ հայկական։ Խաչի տօները մեր Եկեղեցւոյ մէջ, դիմաւորուած են միշտ կրկնակ զգացումներով, կրօնական և ազգային. և այս իրողութիւնը տարբեր չէր կրնար ըլլալ ժողովուրդի մը համար, որ Խաչին Խորհուրդը ապրած է ինչպէս իր հոգեկան, այնպէս ալ իր ֆիզիքական բովանդակ պատմութեանը ընթացքին։

Ամէն ժողովուրդ, իր կեանքի որոշ պարագաներուն կամ անոր ճակատագրական որևէ մէկ շրջանին, աւելի կամ նուազ չափով, կրնայ զգացած ըլլալ այս պատմական և նոյն ատեն հոգեբանական ճշմարտութիւնը։ Բայց թոյլ կուտանք մեզի ըսելու թէ ոչ մէկ ազգ զգացած չէ զայն թերևս այնպէս ու այն չափով՝ ինչ չափով որ զգացած ենք մենք։

Առաջին այն պահէն ի վեր՝ ուր մեր ցեղային զգացումը փոխուեցաւ ազգային գիտակցութեան, քրիստոնէութեան լոյսին շնորհիւ, մեր կեանքը իր կրկնակ խաչերը ունեցաւ, եթէ կարելի է այսպէս ըսել. չանցաւ մեզմէ դար մը, ուր, մէկ կամ երբեմն աւելի անգամներ, քաղաքական փոթորիկները չը սարսէին մեր գոյութիւնը. սակայն ամէն անգամուն ալ վէրքը, ուշ կամ կանուխ, սպիացաւ վերջապէս։ Աղէտը չկրցաւ բոլորովին ջլատել մեր ուժը, ու, ընդհակառակ թէ տարաշխարհիկ հորիզոններու զիրկը, կրցանք միշտ վերատին ժողվել մեր ինքնութիւնը։ Եթէ վիշտը չկրցաւ աւելի լուրջ և իմաստուն ընել մեզ, սակայն թէ՛ մենք և թէ՛ ուրիշները կրցանք հաստատել մեր վրայ ապրելու իրաւունք ունեցող ժողովուրդի մը արժանիքը։

Խաչը, հոգևոր այն դրօշը եղաւ, որուն հովանիին ներքև մենք կրցանք դրեթէ միշտ ծառանալ մեր բարոյական և ֆիզիքական գոյութեան սպառնացող վտանգներուն դէմ։

Եթէ միւս եկեղեցիներու համար Խաչը տառապանքի սէմպոլ մը եղաւ

digitised by A.R.A.R.@

ու կը մնայ, մեզի համար ապրուած աւետարանն է ան, թէ մեր անհատական և թէ ազգային գիտակցութեանը և պատմութեանը մէջ։ Մեզի համար Խաչը ապրուած ողբերգութիւն մը չէ միայն, այլ մե՛ր ապրած ողբերգութիւնը։

Սակայն մենք չընդունեցինք և չապրեցանք Խաչը միայն իր սրտառուչ ողբերգութեանը համար, վասն զի ըլլալ աւելի ճշմարիտ է այն մտածումը, թէ հայը ճակատագրուած էր քրիստոնէութեան. հայուն որոնումը ողբերգական ինչ մը ունի, ոչինչ կրցաւ արգիլել իր մեռնելու մութ կամեցողութիւնը, իր հաստատ հաւատքը ճակատագրական կործանումներու, բայց յաւիտենական յոյսթանակին։ Հայը կը զանազանուի ուրիշ ժողովուրդներէն ոչ միայն իր ինքնութեամբ, այլ նաև զայն տևականացնելու կամքովը, խորհուրդովը։ Եթէ մենք կրեցինք տառապանք, զրկանք, և ունեցանք հրաժարումներ, այդ բոլորը վասնզի հաւատացինք թէ մեր այդ խաչերու բարձունքներէն պիտի կրնանք ի վերջոյ ողջունել յարութեան փառքը ցեղին, որուն Խաչը կը ծանրանար ինչպէս սերունդներու՝ նոյնպէս անհատներու ուսին։ Ըսինք թէ յառաջիկայ երկու Խաչի տոներէն Վարագայ Խաչը զուտ հայկական բնոյթ ունի և ճիշդ անոր համար անիկա յայտնութիւնը, այլակերպումն է մեր կեանքին։ Տեսիլքը, աստուածային յայտնութիւնը, աւանդութիւնը, բոլորը քովքովի կուգան, զայն ընելու սրտառուչ և հայեցի, պատկերը մեր կեանքին։ Այս պարագան դիւրին արձակուած վճիռ մը չենք ուզեր նկատել, եթէ երբեք քրիստոնէութեան ընդհանուր նկարագիրը մանաւորին, ցեղայինին, անվատին հանդուցը, շիկուցն է ընդհանուրին, համամարդկայինին և աստուածայինին ներքը, է նոյն ատեն զերաճումը իւրաքանչիւր ժողովուրդի ներգոյակ յատկութիւններու։ Գիտենք թէ էջմիածինը մերինը ունենալու ձգտումին հրաշագործումն է մեր ժողովուրդի խոր հոգիին մէջը։ Այս տեսակէտէ առնուած, Վարագայ Խաչը ուրիշ բան չէ եթէ ոչ այդ նոյն ձգտումին մէկ ուրիշ կերպարանքը։

Եթէ իրերն ու գործերը տեսնելու և դատելու համար աշխարհ ունի իր տեսակէտն ու չափանիշը, որոնք մէկի մը համար հրաշքին զարմանալիքն են, և ուրիշի մը համար գիտութեան փաստը, Հաւատքը ե՛ւս կեանքը և արժէքները ճանչնալու և ըմբռնելու համար ունի իր ստուգանիշերը։ Անոնք որ Աւետարանի պատուհանէն կը նային Խաչին, անոր վրայ պիտի կարդան պատմութիւնը յաւիտենական Հրաշքի մը, զոր Աստուած ի սկզբանէ անտի կատարած է մեզի։ Այդ հրաշքը հակառակ մարդկային տկարութեան աստուածային զօրութեան յայտնագործումն է երկրի վրայ։

Ի վերջոյ ճշմարտութիւնը չի թաղուիր, ուր որ ալ պահուած ըլլայ, ով որ ալ պահած ըլլայ։ Լերան ծերպը, խորվիրապը, բռնութեան երկաթը յաճախ առ երևոյթս կրնան զայն զրուանել, սակայն ճառագայթը չի թաղուիր և բարին միշտ պիտի յաղթանակէ։ Նատ յաճախ տեսիլքը յայտնիչ ուժն է ճշմարտութեան, սակայն մարդկային տեսիլքները զառանցանքներ են և յերիւրանք եթէ Աստուած չմիջամտէ։ Տեսիլքը անհրաժեշտ է, տեսիլքէ զուրկ հոգիները նման են լոյս չունեցող ջահերու։ Տեսիլքը ապագան է մարդկութեան. եթէ մարդկային ձգտումները այսինքն կրօնները չկարենան անով հանելու մեծ նպատակին, կը դառնան կոտրատած լապտերներ, միայն ծխալու սահմանուած։

Տեսիլքի մը իրագործումն է Վարագայ Խաչի տօնը։ Աւելորդ չէ անգամ

digitised by A.R.A.R.@

մը ևս կրկնել թէ պատմութեան բոլոր մեծ գործերը նախ տեսիլներ, ծրագիրներ են եղած։ Երազ մըն էր Սողոմոնի գեղեցիկ տաճարը փիւնիկեցի ճարտարապետի մտքին մէջ, տեսիլք մը կամ ծրագիր մըն էր Մովսէսի հռչակաւոր արձանը՝ Մ. Անճելոյի երևակայութեան խորը, երազ մը՝ այս գեղեցիկ տիեզերքը Աստուծոյ մտքին մէջ։ Տեսիլքը Աստուծոյ խորհուրդին արտայայտութիւնն է, շողը հոգիի աւերակին, սանդուխը մարդուն և Գերազանցին միջև, մարդկային հոգիի անկատարութեան վրայ շրջող հոգին, որ քաոսէն, անէութենէն կը նորաստեղծէ նոր աշխարհներ։

Անբնական չէ որ հայը իր պատմութեան այդ մութ օրերուն՝ խաչեր միայն տեսնէ իր մտքի հորիզոնին, իր տեսիլքին մէջ, ամէն օր խաչուող ժողովուրդի մը մտայղացքը, որ սակայն յուսահատեցուցիչ ըլլալէ հեռու է, վասն զի խաչը ճամբան է փրկութեան, մեծ գալիքին։ Հայը գիտցեր է խաչով չափել կեանքին արժէքը, վասնզի հաւատացած է թէ փառքի ամենաապահով ճամբան է այդ։ Վասնզի կեանքը ոչ հաճոյք է և ոչ հեղնանք, այլ պարտականութիւն մը՝ այսինքն խաչ մը։ Այժմ չկայ Վարագ, մութ ժամանակները շատ մը Վարագներու յիշատակը միայն թողուցին մեր հոգիին իբր անկորնչելի անցեալի մը փառքը, սակայն խաչը միշտ ընկերը մնաց հայուն և լուսաւորեց ու յաւերժացուց անոր գոյութիւնը։

Ժամանակները իրարու յաջորդեցին, քանի անգամներ հայը վիշտով և արիւնով ներկեց իր թևերը, սակայն երկնքի կարօտը միշտ անուշցած մնաց իր հոգիին խորը, երբ աշխարհը գինք լացուց և վիրաւորեց չարաչար, և դարձաւ օրրանը իր հառաչանքին. ան հաւատաց թէ իր արեան և քրտինքի իւրաքանչիւր կաթիլը, սիրուած ու սրբագործուած սերմի մը հատիկն է ապագայ երջանկութեան պարանքին։ Հոգեկան այդ տառապանքին պտուղն է Նարեկացին, մեր ցեղի աստուածային ձգտումին հրեղէն սիւնը։ Շնորհալին դարեր վերջ իր շրթները պիտի մօտեցնէ հայ տառապանքի կարմիր եղեգնիկի վիրաւոր ծակերուն, երգելու համար հայ հոգիի տխրանուշ մեղեդին։

Անցան ցաւով ու արիւնով դարերը հայուն, և եկանք ու հասանք նոր ժամանակներու սեմին։ Ուրախ ու երջանիք ենք որ կեանքով ու տեսիլքով արժևորուած մեր խաչը մօտ է տակաւ վերածուելու յաղթանակի և յարութեան դրօշին, ու լոյսը որ մեր զերազոյն ձգտումին առարկան եղաւ, ազատութիւնը որ մեր ցեղի բաբախուն ըղձանքը կազմեց, կը հաւատանք թէ պիտի չթողուն այլևս զմեզ խաւարի ու անստուգութեան ծոցը։ Հայ սփիւռքը քառորդ դարէ ի վեր իր մութ զնտանին մէջ ամուր փարած իր խաչին, սպասեց անոր լոյսին, և հայ տարագիր ու գերի զաւակները դարերով սպասեր են այն օրուան որ այսօր փոխան Վարագի՝ կը շողայ Արարատի ոտքին, իր լոյսին կանչելով բովանդակ հայութիւնը։

Ինչպէս անհատներու՝ այնպէս ալ ազգերու գոյութեան մէջ, ո՛ւր որ ազնըլական անցեալի մը ընդհոդուած նշմարներ կան, ամէնէն դժան և ամեհի մրրիկներէն և փլուզումներէն վերջ, օր մը, անհրաժեշտաբար պիտի բացուի նոր և բարգաւաճ շրջանի մը արշալոյսը։ Վստահ ենք թէ մեր յոյսը մեզ չի խաբեր թէ մենք մօտ ենք արևոտ այդ դուռներուն։

ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@

ԿՐՕՆԱԿԱՆ

Հաճոյով հոս կը դնենք Նորին Ս. Օծութիւն Գարեգին Կաթողիկոսի հոգեշունչ խօսքը, մեր խնդրանքով յատկապէս Սիոնին գրկուած։ Սոյն քարոզը ևնոյշ մրն է Նորին Ս. Օծութեան արդեն մամուլի տակ եղող կրօնական հատորին։

ԴԱՐՁ
ԴԷՊԻ ԼՈՒՍԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ

(ԱՆԱՌԱԿԻ ԿԻՒՐԱԿԻՆ)

Նորուսեալ էր՝ եւ զտաւ
(Ղուկ. ԺԵ. 3-24)

Ա.

Մեր Եկեղեցու հայրերը գեղեցիկ կերպով կարգաւորել են ժամապաշտութեան գործը, երգերն ու շարականները, Հին և Նոր Կտակարանների ընթերցուածները, որպէս մի մի փոքրիկ ամբողջութիւն, կապելով դէպքերի, տօների կամ որոշ գաղափարների հետ։ Այս վերջին կարգաւորութիւնը, յատկապէս, աչքի է ընկնում Մեծի Պահոց Կիւրակիների ընթերցուածների դասաւորութեան մէջ. ընթերցուածների դասման անունով էլ կոչուած են Կիւրակիները։ Այս օրուան Կիւրակին Անառակի Կիւրակի է կոչւում այն պատուական առակի անունով, որ անառակ որդու գարձի պատմութեան է վերաբերում։ Ընթերցողների յիշողութեան մէջ վերակենդանացնելու և մեր խօսքի հասկացողութիւնը դիւրացնելու համար՝ տալիս ենք առակի համառօտ բովանդակութիւնը։

Մի մարդ երկու որդի ունէր։ Կրտսերը հօրից ստանալով իրեն հասանելիք ժառանգութեան բաժինը, գնաց օտար աշխարհ, և շուայտութեամբ վատնեց իւր ստացած ամբողջ հարստութիւնը։ Նորա չար բաղդից այդ երկրում սով սկսաւ և նա ստիպուեցաւ հրեայի համար ամենից անարգ գործը, խոզարածութիւն յանձն առնել իւր անունդը հոգալու համար։ Բայց նոյն իսկ խոզերի առաջ թափած մնացորդներից էլ բաժին չէր հասնում Նորան։ Իւր ամենածանր նեղութեան մէջ յիշեց հօր հացալից տունը, բազմաթիւ ծառաներով, և որոշեց գնալ հօր ոտներն ընկնել, որ անարժան լինելով որդի կոչուելու, ընդունէ որպէս մէկը իւր ծառաներից։ Անառակ որդին երբ մօտեցաւ և հայրը լսեց Նորա գալուստը, ընդառաջ գընաց, գրկեց և համբուրեց, պատուիրեց Նոր զգեստ հագցնել, պարարտ եզներից մէկը մորթել և ուրախութեան խնջոյք պատրաստել, «Զի այս որդի իմ մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ»։

Մեծ եղբայրը, երբ դաշտից տուն դարձաւ և իմացաւ պատճառը ուրախութեան, իւր դժգոհութիւնը յայտնեց հօրը։ Այսքան ժամանակ քեզ հետ եմ և հաւատարմութեամբ իմ օրդիական պարտաւորութիւններս եմ կատարում, մի ուլ անգամ չտուիր, որ ընկերներիս հետ ուրախանամ, իսկ քո այս որդին, որ հարստութիւնդ անառակութեամբ վատնեց, պարարտ եզը մորթեցիր Նորա համար։ Բայց հայրը մեղմութեամբ պատասխանեց. «Որդեա՛կ, դու միշտ ինձ հետ ես, և ինչ որ իմն է, քոնն է, բայց քո այս եղբայրը մեռած էր և կեանք ստացաւ, կորած էր գտնուեցաւ»։

Բ.

Այս պարզ, բայց պատկերաւոր, սրտառուչ և գեղեցիկ առակի մէջ ամփոփուած է աւետարանական քարոզութեան ամենամեծ գաղափարներից մէկը, երկնաւոր Հօր անսահման գթութիւնը դէպի մարդկային հոգին և Նորա բարձր գնահատութիւնը։ Այս միևնոյն գաղափարը մեր Տէրը այլ և այլ ձևերով արտայայտել է իւր քարոզութիւնների մէջ. երկնաւոր Հայրը գթութեան կատարելութիւնն է, որին պիտի հետևեն մարդիկ, Նորա խնամքին են ենթարկուած բոլոր մարդիկ, որոնց գլխի մազերն անգամ համրուած են Նորա կողմից։ Եթէ երկրաւոր հայրերը, որ չար են, պակասաւոր, իրենց հաց խնդրող որդուն քար չեն տալ և ոչ ձուկ խնդրողներին՝ օձ, որչա՛փ ևս առաւել երկնաւոր և բարի Հայրը։ Մարդկային հոգին, անձը թանգ է և արժէքաւոր Աստուծոյ համար։

Բայց այդ միևնոյն գաղափարները աւելի շեշտուած և աւելի պայծառ կերպով արտայայտուած են այս օրուան ընթերցուածի մէջ։ Քրիստոսի մերձաւորութիւնը մաքսաւորներին և մեղաւորներին, որոնք գալիս էին Նրան լսելու, բամբասանքի նիւթ էր դարձել փարիսեցիների և դպիրների կամ

digitised by A.R.A.R.@

սաղուկեցիների համար, և խէթ աչքով էին նայում, որ նա ուտում, խմում է, նստում, կանգնում նրանց հետ։ Ուրիշ անգամ նա ասել էր արդէն, թէ «Ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս» (Մտթ. Թ. 13)։ Այժմ բացատրում է իւր միտքը աւելի պարզ, առաւաւոր կերպով. հովիւը հօտը թողնում և փնտռելու է գնում իւր կորսուած ոչխարը, և երբ գտնում է, ուրախանում է։ Կինը, որ կորցրել է իւր տաս դրամներից մէկը, սրոնում է տան ամէն անկիւնները և երբ գտնում է, ուրախանում է ինքը և ուրախակից անում իւր դրացիներին։ Այսպէս, ամէն մի կորած հոգու գիւտը, ամէն մի մեղաւորի դարձը ուրախութեան պատճառ է հրեշտակների և Աստուծոյ համար երկնքում։

Անառակ որդին երբ եկաւ, հայրը նորան չյանդիմանեց, քննութեան չենթարկեց, թէ ինչպէս վատնեց իւր հարստութիւնը, ինչպէ՞ս անառակ կեանք վարեց, այլ գրկաց ընդունեց նորան, համբուրեց, ուրախացաւ և խնջոյք սարքեց։ Բաւական է, որ վերադարձել է մոլորուած որդին, բաւական է որ հասկացել է իւր սխալը և դարձի եկել, մեռելութիւնից յարութիւն է առել, փրկուած է նորա թանկագին հոգին, «կորուսեալ էր՝ և գտաւ»։ Մնացածները երկրորդական են։ Լայնախոհ, ներողամիտ և սիրող երկնաւոր Հօր պատկերն է գծագրուած այստեղ դէպի մարդը, դէպի մարդկային թանկագին հոգին։ Մարդասիրութեան, անձի կամ հոգու գնահատութեան ամենաբարձր արտայայտութիւնը բոլոր կրօնների և մարդկութեան պատմութեան մէջ, և բոլորովին տարբեր, մեր սովորական մտածողութեան և հասկացողութեան չափանիշներից։

Մեր Տիրոջ կոչումը փրկիչ բառով է սահմանուած, փրկիչ բարոյական մտքով։ Նա չէր եկել նիւթական կամ արտաքին, քաղաքական կամ տնտեսական հասկացողութեամբ փրկութիւն բերելու. Նորա կոչումը շատ աւելի բարձր էր, յաւիտենական։ Նա եկել էր աւելի թանգ բանի համար, հոգիների փրկութեան և նրանց արժէքի բարձրացման համար, «Ինդրէք՛ նախ զարքայութիւն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ» (Մտթ. Զ. 33)։ Արդարութեան գաղափարը Աւետարանի մտքով ոչ միայն հակադրութիւն չէ քաղաքական ճշմարիտ ազատութեան և ժողովրդական կեանքի բարօրութեան, այլ և նրանց հիմքը պիտի լինի։ Մարդկային յարաբերութեան մի նոր չափանիշ էր բերել, սիրոյ և եղբայրութեան, հոգիների հաւասարութեան եւ գնահատութեան գաղափարը։ Մի է Աստուած, և Նա երկնաւոր Հայրն է ամէնքի։ Հոգիների մէջ ազգի և սեռի խտրութիւն չկայ, արտօնեալ և իրաւազուրկ չկայ։ Բոլորն էլ հաւասարապէս թանգ են Աստուծոյ համար և թանգ պիտի լինին իրար համար. «Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո»։ Եւ սրովհետև թանգ է ամենայն հոգի կամ անձն, ուստի և կորուսեալի գիւտը կամ դարձը, ուրախութիւն է Աստուծոյ համար։ Բայց ոչ միայն այդ, այլ և պէտք է կորուսեալի յետեւից գնալ, փնտռել և գտնել նորան։ Այս է պատճառը, որ քրիստոնէութեան առաջին դարերից՝ բարի հովիւը գտած ոչխարը ուսին նիւթ է դարձել արձանագործութեան։ Հոգիների ազատութեան կամ փրկութեան, նրանց բարձրացման համար է եկել Քրիստոս. Աստուած մեղաւորի մահը չի կամենում, այլ նորա դարձը և կեանքը։ Այսպէս են ըմբռնել և հասկացել եկեղեցական մեծ հայրերը. ըստ Աթանասի Քրիստոս մարդացաւ, որպէսզի մարդը աստուածանայ։

Ասացինք, թէ տարբեր են այս մտքերն ու ըմբռնումները մեր սովորական հասկացողութիւններից։ Մենք ուրիշների մէջ, չատ յաճախ, միայն պակասաւոր կողմն է որ տեսնում ենք, փոքր պակասութիւններն իսկ խոշորացոյց ապակիով դիտում, մինչդեռ պէտք էր նախ դրական կողմերը որոնել և ըստ այնմ դատել։ Սովորական, լաւ մարդիկն անգամ, որոնց տիպն է այստեղ աւագ որդին, հաւատարիմ իւր որդիական արտաքին պարտականութիւնների կատարման մէջ, չի տեսնում կարիքը, երբ հաշիւներով է մօտենում խնդրին։ Նորա համար էական չէ, որ եղբայրը տուն է դարձել, այլ որ հայրը ըստ արժանւոյն չէ գնահատել իւր հաւատարմութիւնը, իւր կարծիքով։ Իսկ «փարիսեցիներ ու սաղուկեցիներ» միայն արտաքինն են տեսնում ու դատում, ուրիշի աչքի չիւղն են տեսնում, իրենց աչքերում գերան լինելով։ «Շնացող կնոջ» մէջ միայն քարկոծման արժանին,

digitised by A.R.A.R.@

հպարտութեան և գերազանցութեան բարձունքից նայելով, առանց անդրադառնալու դէպի իրենց պակասութիւնները։ Բայց Տէրը թափանցում է նորա հոգու խորքը և այնտեղ տեսնում է առողջ, բայց թմրած յատկութիւններ որ զարթնելով, աճել և ամբողջ հոգին կենդանացնել, կերպարանափոխ անել կարող են, բոլորովին հակառակ վՀիռ է տալիս. «Եւ ոչ ես դատապարտեմ զքեզ. ե՛րթ, յայսմհետէ մի՛ մեղանչեր» (Յովհ. Ը. 11)։ Կեանքի մէջ, երբեմն, նեղլոզամտութիւնը դէպի յանցագործը աւելի դրական արդիւնք է ցոյց տալիս, քան պատիժը, որին արժանի է, միայն մարգարիտը խոզի առաջ պիտի չձգել։ Ներողամտութիւնն էլ ամէն մարդու յատուկ չէ, այդ մեծ և բարձր հոգիներին է յատուկ և նրանք զգում են, թէ ո՛րտեղ պէտք է գործադրել։

Գ.

Դիտել է՞ք լեռների բարձունքներից աւելի հեռաւոր տարածութիւնները։ Ձորերն ու դարաւանդները միայն ձեր շուրջն են, քանի հեռուն էք նայում, այնքան հաւասարւում են անհարթութիւնները և գեղեցիկ, ակնապարար դաշտավայրի փոխարկւում։ Մոռացէք եսական եւ անձնական անհաւասարութիւններն ու տեսակէտները։ Սովորեցէ՛ք բարձունքից դիտել մարդկային կեանքն ու գործերը, և եթէ մի քիչ էլ թափանցեք ուրիշի հոգու խորքը և համամտութեան գնէք ձեր ներքին աշխարհի հետ արդարութեան զգացումով, այնտեղ մեծ գեղեցկութիւններ կը տեսնէք։

Արդարև, գեղեցիկ է մարդկային հոգին, ամենամեծ հրաշալիքը տիեզերքի մէջ, ինքն էլ մի տիեզերք։ Իզուր չէ «ներքին աշխարհ» կոչուել, մի մեծ աշխարհ է նա, մեր մտքով և զգացմունքով, մեր յոյսերով եւ ձգտումներով, մեր երեւակայութեամբ և թռիչքներով, մեր սիրով և կարեկցութեամբ, մեր առաքինութիւններով և բարի գործերով, մեր բարեպաշտութեամբ և խզճի ձայնով . . . ։ Հասկանալի է, թէ ինչո՛ւ մեր Տէրը մարդկային հոգին կամ ներքին աշխարհը արքայութեան վայր է ճանաչել. «Արքայութիւնն ի ներքս ի ձեզ է»։ Բայց նա՝ այդ հոգին, մի դժոխք կարող է դառնալ իւր նախանձով, ատելութեամբ, չարութեամբ, եսականութեամբ, շահամոլութեամբ և այլ բացասական կրքերով։

Դալարագեղ բուրաստան դարձրէք այդ հոգին, զարդարուած սիրուն, ակնապարար, հոտաւէտ ծաղիկներով։ Նմանեցէ՛ք իմաստուն վաճառականին, Տիրոջ խօսքի համեմատ, որ վաճառում է ամէն ինչ և թանկագին մարգարիտը գնում։ Այդ թանկագին մարգարիտը ձեր ներքին աշխարհն է, ձեր հոգին։ Ամենայն ինչ անցաւոր է, երկրորդական։ Գործադրեցէ՛ք ձեր մեծ ու փոքր ունակութիւնները, ձեր գիտութիւնը, ձեր արուեստը, ձեր գրիչը, ձեր լեզուն, ձեր ստացուածքը, որպէսզի ձեր հոգին դառնայ անգին մարգարիտ, պայծառ, լուսաւոր և աստուածանման։ Ամենափոքր բարիքն էլ, մինչև ծարաւին մի բաժակ ջուր մատուցանելը, անտես չի մնալ Աստուծոյ աչքից։ Ըստ չափու և ըստ կարողութեան, բերէք ձեր աջակցութիւնը հանրութեան բարոյական չէնքի կառուցման մէջ, նախ ձեզնից սկսած և ապա ընտանիքից մինչև եկեղեցու, ազգութեան և հայրենիքի օլորտները։ Այս է Աստուծոյ արքայութեան տիրապետութեան ուղեկիծը երկրիս վրայ։

Մարդկային հոգու և անձի արժէքաւորումը հիմքն է այս բոլորի։ Անձնաւորութիւնը սուրբ է, մի մօտեցէք նորան երկաթի ձեռնոցներ հագած։ մեծ վիշտ է պատճառում մեզ, տեսնելով մեր ժողովրդի մէջ երկպառակութեան, իրար սնացնելու, իրար հակառակելու հոգին մինչև բացարձակ թշնամութիւն։ Այդ ոչ քրիստոնէական է և ոչ ազգասիրական, այլ միակողմանի մոլորութիւն, և նոյնիսկ հիւանդութիւն և սխալ հասկցուած հայրենասիրութիւն է։ Ամենայն մոլեռանդութիւն եւ չափազանցութիւն վնասակար է, որից պէտք է խուսափել։

Գնահատել մարդկային հոգին, ուրիշի անձը, պատիւը, քրիստոնէական պարտաւորութիւն է և բարեկրթութեան պտուղ։ Դէպի լոյս և կեանք ընթացէք Տիրոջ շաւիղով, Աւետարանից եկած ճառագայթներով պառնորդուած։

Շնորհք Տեառն եղիցի ընդ ձեզ, ամէն։

Գ. Կ.

digitised by A.R.A.R.@

ՈՐԴԻ ՄԱՐԴՈՅ

Ստորեւ, կուսանք թարգմանարար, Լիբանանեան արաբ արդի գրականութեան շաւագոյն ներկայացուցիչներեն Խալիլ Ճիպրանի Յիսուս, Որդի Մարդոյ, գիրքեն հատուած մը։

Խալիլ Ճիպրան, նկարիչ եւ տաղանդաւոր գրագէտ, արաբ ժամանակակից գրականութեան արձակ բանաստեղծութեան դպրոցի ռահվիրան է նկատուած, ընելով գրական իր փորձերը արաբերեն լեզուով նախ, հուսկ, աւելի համբաւի եկած, Ամերիկա, Նիւ Եորքի մէջ, անգլերեն լեզուով յոյս ընծայելով իր Մարգարէ, եւ Յիսուս, Որդի Մարդոյ եւ այլ երկեր։ Այս վերջին հատորին մէջ, որմէ առնուած եւ թարգմանուած է սա հատուածը, երեւան կուգայ ան իբրեւ խորհրդապաշտ եւ յայտնաստես գրող մը, զգայուն արձակ բանաստեղծութեան մը տնի յանկուցիչ տարերով, վերլուծման եւ խորհրդածութեան ենթարկելով, աւետարաններեն վերբերուած մեր Տիրոջ «խօսքերուն եւ գործերուն» ակնաստես եւ ժամանակակից անձերու վկայութիւնները։

Խալիլ Ճիպրան, ուսնցած է եղերական վախճան, վաղահաս տարիքի մէջ։

Ծ. Թ.

Զարմացեր եմ յաճախ թէ Յիսուս Մարդ մը՝ էր միսէ ու արիւնէ մեզի նման, կամ մտածում մը անմարմին, միտքին մէջ, և կամ գաղափար մը մարդուն որ կ'այցելէ երեւակայութեան։

Յաճախ ինձ կը թուի թէ երազ մը՝ էր Ան, անհամար մարդերէ և կիներէ երազուած նոյնատեսն քունի մը մէջ, աւելի խորունկ քան քունը ինքնին, արշալոյս մը՝ աւելի խաղաղ քան բոլոր արշալոյսները։

Ու կը թուի թէ առնչելով երազը, մին միւսին, զայն իրականութիւն մը կը սկսինք նկատել որ անշուշտ տեղի է ունեցեր, ու տալով անոր մարմինը մեր երեւակայութեան և ձայնը մեր կարօտին, զայն ըրած կ'ըլլանք գոյացութիւն մը մեր իսկ գոյացութենէն։

Բայց ճշմարիտ է թէ երազ մը՝ էր Ան։ Զինք ճանչցանք երեք տարի ու տեսանք զինքը բաց աչքերով՝ վառ կէսօրին։

Հպանք Իր ձեռքերուն, ու հետեւեցանք Իրեն տեղէ տեղ։ Լսեցինք Իր խօսքերը ու վկայեցինք Իր գործքերուն։ Կրնա՞ք մտածել որ մենք գաղափարի սիրոյն գաղափար մը որոնած ըլլայինք, կամ երազ մը՝ երազներու աշխարհին մէջ։

Մեծ իրողութիւնները յաճախ օտար կը թուին մեր առօրեայ կեանքին, թէեւ անոնց բնութիւնը արմատացած ըլլայ մեր բնութեան մէջ։ Անոնք թէեւ յանկարծ կ'երեւին իրենց գալուստովը և կ'անհետին յանկարծ, բայց անոնց ստոյգ տեւողութիւնը տարիներու և սերունդներու համար է։

Նազովրեցի Յիսուս Մեծ իրողութիւնն էր ինքնին։ Մարդը, որուն հայրն ու մայրը և եղբայրները կը ճանչնայինք հրաբ մրն էր ինքնին, որ կը գործէր Ցուդայի մէջ։ Այո՛, բոլոր իր հրաշքները, եթէ դրուին իր ոտքին՝ պիտի չ'ելլեն իր բումբին բարձրութեան։

Ու բոլոր դեռերը բոլոր տարիներու՝ պիտի չկրնան տանիլ մեր յիշատակները Անկէ։

Բոցավառող լեռ մըն էր Ան գիշերուան մէջ, տակաւին քաղցր ցոլք մը՝ բլուրներէն անդին։

Հեղեղ մըն էր Ան հոսող բարձունքներէն դէպի գաւտերը, իր ճամբուն վրայ ամէն ինչ աւերող։ Ու Ան նման էր Մանուկներու քրքիջին։

Ամէն տարի սպասած եմ գարնան այցելելու այս հովիտը։ Սպասած՝ շուշաններու և արջտակներու, ու յետոյ, ամէն տարի, տրտմած հոգիիս մէջ, զի գարունով հրճուելու կարօտը ունեցեր եմ ու չեմ կրցած։

Բայց Յիսուս իմ տարիքիս՝ անշուշտ, գարուն էր Ան, ու Իր մէջն էր խոստումը բոլոր գալիք տարիներուն։ Ան ուրախութեամբ կը լեցնէ սիրտս, ու մանուշակներու պէս կը շիկնիմ լոյսին մէջ իր գալուստին։

Ու հիմակ, փոփոխուող եղանակները աշխարհներուն, որ դեռ մերը չեն, պիտի չկրնան ջնջել մեր այս աշխարհէն իր հրապոյրը, գեղեցկութիւնը։

Ո՛չ, երեւոյթ մը չէր Յիսուս, ո՛չ ալ յղացք մը՝ բանաստեղծներու։

Զեզ և ինձ նման Մարդ մը՝ էր Ան, մանաւանդ տեսնելու, շօշափելու ու լսելու մէջ, բայց աննման մեզի՝ միւս բոլոր կերպերուն մէջ։

Ուրախութեան մարդն էր Ան, և ճամ-

digitised by A.R.A.R.@

բուն վրայ ուրախութեան հանդիպեցաւ վիշտերուն քոլոր մարդոց։ Ու բարձրութենէն իր վիշտերուն, տեսաւ Ան ուրախութիւնը բոլոր մարդոց։

Տեսիլքներ կը տեսնէր Ան զորս մենք չենք տեսներ, Ձայներ կը լսէր, զորս մենք չենք լսեր, և կարծես թէ կը խօսէր անտեսանելի բազմութիւններու, ու դեռ կը խօսի Ան յաճախ, մեր միջոցաւ, անծնունդ ազգերու։

Մինակ էր յաճախ Յիսուս։ Մեր մէջն էր, բայց ոչ մեզմէ։

Երկրի վրայ էր Ան, բայց կը մնար երկնքի մէջ։ Մեր միայնութեան մէջ միայն կրնաք զգալ իր միայնութեան աշխարհը։

Սիրեց Ան մեզ գորովալիր սիրով։ Ինոր սիրտը հնձան մըն էր։ Դուն և ես կրնանք մօտենալ, բաժակներով ըմպելու Անկէ։

Յիսուսին մէջ բան մը միայն չէի հասկընար, կը սիրէր կատակներ ընել իր ունկնդիրներուն հետ, շարժուձևեր ու խաղեր կ'ընէր բառերու վրայ, ու կը խնդար լիութեամբն իր հոգիին, նոյն իսկ երբ այլուրութիւններ կային իր աչքերուն՝ և տրխրութիւն՝ իր ձայնին մէջ։ Բայց հիմա կը հասկնամ։

Կը մտածեմ յաճախ երկրի մասին կնոջ մը նման՝ որ յղի է իր անդրանիկ զաւակովը։ Երբ Յիսուս ծնաւ, անդրանիկ զաւակ էր. ու երբ մեռաւ, առաջին մարդն էր որ կը մեռնէր։

Քեզ չթուիլ՞ թէ երկիրը անդորրացաւ մռայլ այդ Ուրբաթ օրը, ու երկինքները պատերազմի մէջն էին երկինքներու հետ։

Ու չմո՞ զգար թէ երբ իր Դեմը անեղեւութացաւ մեր տեսողութենէն, մենք ուրիշ բան չէինք, բայց յիշողութիւններ մթութեան մէջ։

Անգլ. թարգմ. ԽԱՎԻԼ ՅԻՊՐԱՆ
ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵԿԵՂԵՑԱՊԱՏՄԱԿԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ԱՂԹԱՄԱՐ

Ս. Էջմիածնի և նուիրապետական միւս Աթոռներու յարաբերութեանց նուիրուած մեր այս երկրորդ յօդուածով կ'ուզենք համառօտակի ներկայացնել պատմութիւնը այն յարաբերութեանց, զոր Ս. Էջմիածնի եւ Աղթամարի Աթոռները ունեցան իրարու հետ, 1441 թուականէն մինչև Աղթամարի կաթողիկոսութեան դադարումը։

Վիրապեցիին առաջին գործերէն մին եղաւ իր ընտրութենէն յետոյ՝ հրատարակել արձակման ընդհանուր կոնդակ մը. հոն Աղթամարի կապանքէ արձակումը մասնաւոր կերպով դրուած է սա բառերով. «Մանաւանդ զԱղթամարայ կաթողիկոսն զտէր Դաւիթ և եպիսկոպոսունքն ամենայն և վարդապետքն ամենայն, քահանայք և սարկաւագունքն ամենայն, ժողովուրդքն և ամենայն աստիճանաւորքն։ Արք և կանայք և ամենայն կենդանիք և հանգուցեալքն ի Քրիստոս, օրհնեալ և արձակեալ եղիցին յամենայն կապանաց, յանիծից և ի բանադրանաց և ի կապից մեղաց իւրեանց։ Զոր Գրիգորիոս կաթողիկոսն և իւր միաբանեալքն ամենայն որք ժողովեցան և գանէին և զբանադրանս գրեցին, եւ արձակեմ զնոսա ի կապանաց անիծից և ի բանադրանաց և ի դառն դատապարտութենէ նոցա որք անցին զպատուիրանաւն Աստուծոյ և ապըստամբեցան ի Սուրբ Աթոռոյս Էջմիածնի։ . . . Զոր այժմ կաթողիկոսն Աղթամարայ տէր Դաւիթ իւրովք հնազանդեցելովքն ամենայն, զղջացան և հնազանդեցան սրբոյ Աթոռոյս և մեզ։ Նա և մեք ընկալաք զնոսա սիրով ըստ հրամանի Փրկչին և թողաք զյանցանս նոցա և ազատեցաք ի կապանաց անիծից աստ և ի հանդերձեալն ի դատապարտութենէ։ Եւ օրհնեալքն ի նմանէ ճշմարիտ օրհնեալք եղիցին և արձակեալքն ի նմանէ ճշմարիտ արձակեալք, և ձեռնադրեալքն ի նմանէ ճշմարիտ ձեռնադրեալք և մկրտեալքն՝ ճշմարիտ մկրտեալք, պսակեալքն ի նոցանէ ճշմարիտ պսակեալք, և խոստովանեալքն ի նոցանէ ճշմարիտ ազատեալք եղիցին ի մեղաց

digitised by A.R.A.R.@

ւիրեանց» (Դրեպ. Ցանկ, էջ 619–620)։

Աղթամարեանները բանադրանքով կապուած էին Գրիգոր Գ. Պահլաւունի կաթողիկոսի կողմէ (1113–1166), Սեաւ լերան Մեծ Սիւնհոդոսին որոշումով, որուն կը մասնակցէին երկու հազար հինգ հարիւր հոգի, եկեղեցական բոլոր դասերէն։ Բանադրանքին պատճառը այն էր որ Աղթամարի եպիսկոպոսը Դաւիթ Թոռնիկեան, արհամարհելով Գրիգոր Պահլաւունիի տաղաւորութիւնը, ինքզինքը կաթողիկոս ձեռնադրել տուած էր հինգ եպիսկոպոսներով Զորավանքի Եկեղեցիին մէջ։

Բանադրանքի այդ կապանքը մնացած էր Աղթամարի վրայ մինչև Գրիգոր Տաթեւացիի ժամանակները, որ եռանդուն ոգիով աշխատեցաւ բանադրանքը վերցնել տալու, հայրապետական Աթոռները միացնելու և փոխադրելու Ս. Էջմիածին։ Ինչ որ չէր յաջողած Գր. Տաթեւացիի օրով, իրագործուեցաւ վերջապէս իր աշակերտ Թովմա Մեծոփեցիի և անոր գործակիցներուն հիգերով։ Այսպէս ուրեմն աւելի քան երեք դարեր անբոյժ մնացած վէրք մը կը դարմանուէր և կը սպիանար։

Վիրապեցիի կոնդակէն այնպէս կը հասկցուի թէ բանադրանքէ արձակման թուականին ալ նոյնպէս Դաւիթ անունով կաթողիկոս մը կայ Աղթամարի մէջ որ հնազանդութիւն կը յայտնէ Ս. Էջմիածնի Աթոռին և Հայրապետին։ Ըստ Օրմանեանի Աղթամարի Աթոռին վրայ կայ Դաւիթ Գ. Գուրճիպէկեան 1393–1433ին, իսկ Աթոռին փոխադրութեան օրերուն գահակալն է Զաքարիա Գ. (1434–1464)։

Աղթամարի Զաքարիա կաթողիկոսը հաւատյարաբերութիւն ունէր Կիրակոս Վիրապեցիի հետ, բայց երբ սա գահընկէց եղաւ, Զաքարիա խզեց իր յարաբերութիւնները Մայր Աթոռի հետ, և չուզեց ճանչնալ Գրիգոր Ժ. Ջալալբէգեանցի կաթողիկոսացումը։ Ջալալբէգեանց աղմուկով և խռովութեամբ աթոռ բարձրացած, լուեց Զաքարիայի յարաբերութիւնները խզելուն հանդէպ, ոչ ժողով գումարեց և ոչ վճիռ արձակեց, որով պէտք է ըսել թէ Աղթամարի Աթոռը Կիրակոս Վիրապեցիի օրհնութենէն և արձակումէն յետոյ կրկին չէ նզովուած։

Զաքարիա կթղ. որ յաւակնութիւն ունէր Ս. Էջմիածնի գահը բարձրանալու, ոչ միայն Ջալալբէգեանցի դէմ դիրք բռնեց այլ և միջոցներ ձեռք առաւ, որ կորզէ Աթոռը։ Եւ իրապէս պահ մը յաջողեցաւ ալ արտաքին միջամտութեամբ, այսինքն Գարաքոյունլուներու վեհապետ Ջիհանշահի պաշտպանութեամբ, տիրանալ Էջմիածնի Աթոռին։ Բայց իր յաջողութիւնը կարճ տևեց, տարի մը միայն, և ստիպուեցաւ Էջմիածնէն փախչիլ ծպտուած կերպարանքով, չմոռնալով սակայն հետը վերցնել Լուսաւորչի Աջը և տանիլ Աղթամար, ի մեծ ուրախութիւն իր թեմականներուն։ Զաքարիայի հեռանալէն յետոյ Ջալալբէգեանց շարունակեց իր ընդհատուած կաթողիկոսութիւնը, աթոռակից ունենալով Արիստակէսը։

Արիստակէս Բ. յաջորդեց Ջալալբէգեանցին (1465–1469), բայց իր կաթողիկոսութիւնն ալ պահ մը ընդմիջուեցաւ Աղթամարի կթղ. Ստեփանոս Դ.ի (1464–89) ոտնձգութեան պատճառաւ։ Սա ալ Ջիհանշահի պաշտպանութեամբ, նոմն իր նախորդին, գնաց Էջմիածին և գրաւեց Աթոռը (1467), բայց տարի մը միայն կրցաւ պահել, որովհետև Աքքոյունլուներու պետը Ջիհանկիրի որդին Ուզուն Հասան զօրացաւ եւ նուաճեց Դարաքոյունլուները (1468)։ Ստեփանոս ստիպուեցաւ ետ դառնալ Աղթամար։ Իսկ Ս. Աջը Աղթամար մնաց 15 տարի, մինչև որ Օծոպեցի Վրթանէս եպիսկոպոսի ճարպիկութեամբ կարելի եղաւ վերադարձնել զայն Մայր Աթոռ։

Աղթամարի և Էջմիածնի յարաբերութիւններէն ուշագրաւ դիպուածներ չեն յիշուիր մինչև ԺԶ. դարու կէսը։ Այդ միջոցներուն Աղթամարի Աթոռին վրայ կար Գրիգոր կթղ. Սէֆէտինեան (1542–1610), որ իր իշխանութեան սկիզբները չ. 1557ին փորձեց իր գաւազանին ենթարկել Ս. Էջմիածնի վիճակներէն Խոյ, Սալմաստ, Վան, Ամիդ, Արճէշ, Խլաթ և Մուշ գաւառները։ Բայց Ստեփանոս Ե. Սալմաստեցիի Աթոռակիցը Միքայէլ (1545–1567) բուռն կերպով ընդդիմացաւ, և պարսից ինքնակալ Շահ Թահմազին (1525–1576) դիմելով զօրաւոր հրովարտակ մը ստացաւ ի հաստատութիւն Ս. Էջմիածնի իրաւունքին։

Աղթամարի կաթողիկոսները դար մը ևս անցուցին աննշանակ գոյութեամբ։ Մարտիրոս Մոկացի կաթողիկոսին օրով (1660–1662) Մոկացիք և Շատախցիք իրարու հետ

digitised by A.R.A.R.@

կը գժտին, և Շատախի իշխանը իր գաւառը Էջմիածնի թեմ հաշակելով Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսէն (1655–1680) վարդապետ մը կ'ուղէ։ Սակայն Մարարիոս կթղ. թոյլ չի տար որ բաժանումը տեղի ունենայ, չուտով Շատախ կ'երթայ և տեղւոյն կուսակալին միջամտութեամբ ոչ միայն Շատախը կը հպատակեցնէ այլ և Վան, Բերկրի, Արճէշ, Ալաթ, Բաղէշ, Մուշ, Խոշապ և մինչև Ամիդ իրեն ենթարկող հրովարտակ մը կը ստանայ Սուլթան Մահմէտէն (1648–1687), յայտարարելով թէ այս գաւառները «ընդ տէրութեամբ քով են, սակայն ի յերկիրն պարսից նստող խալիֆայն, զարդիւնս սոցա ժողովել տանի յերկիրն պարսից»։ Բայց Յակոբ կթղ. կը յաջողի նոր հրովարտակով մը վիճակները ետ առնել և Վանի առաջնորդ Պօղոս վարդապետի վրայ դարձնել, առանց յիշելու Էջմիածնի անունը, որովհետև պարսիկներու և օսմանցիներու միջև թշնամութիւն կար։

Երբ Եղիազար Այնթապցի Ամենայն Հայոց Հայրապետութեան Աթոռը բարձրացաւ (1681–1691), իր կարողութեան համբաւը արդէն տարածուած էր կանուխ, ուստի «եկին յամենայն կողմանց ի հնազանդութիւն սմա», մինչև իսկ Աղթամարի Աթոռին կթղ. ընտրուած Թովմաս Յեռիճցին (1681–1698), փոխանակ իր եպիսկոպոսներէն ընդունելու կաթողիկոսական օծումը, «բազում ընծայիւք, եպիսկոպոսօք, քահանայիւք եւ տանուտէրօք» ուղեւորեցաւ Էջմիածին եւ Եղիազար կաթողիկոսէն ընդունեց իր ձեռնադրութիւնը, Մայր Տաճարին մէջ. միւսոն ալ առաւ Էջմիածնէն և այնպէս դարձաւ իր Աթոռը, ճանչնալով Ս. Էջմիածնի գերիշխանութիւնը։ Այս քայլով հայերը կը պապանձեցնէին այն լատինամիտները որոնք ստէպ կը մեղադրէին Հայ Եկեղեցին իբրև բազմագլուխ։

Բայց գժտխտաբար կարճ տեւեց նորահաստատ այս կացութիւնը։ Էջմիածնի կաթողիկոս Նահապետ Եղեսացին (1691-1705), չէ ըսուած թէ ինչ պատճառով, վշտացաւ Թովմաս կաթողիկոսի դէմ և զայն պաշտօնէն զրկելով անոր տեղ կթղ. ձեռնադրեց Աւետիս եպիսկոպոս մը և զրկեց Աղթամար որ Աթոռին տիրանայ։

Թովմաս կթղ. սակայն չընկճուեցաւ, և օսմանեան կուսակալին ձեռքով Աւետիսը վտարեց, և որպէսզի Աթոռը Մայր Աղթամարցի եպիսկոպոսներուն ձեռքը, իբրև Աթոռակից օծեց Սակակ Արծկեցի եպիսկոպոսը. նոյնիսկ աւելի առաջ ալ հրթայով Վանի մէջ նստող Էջմիածնական եպիսկոպոսը հեռացնել տուաւ և Վանայ վիճակին վրայ Աղթամարեան եպս. մը հաստատեց (1697)։

Աղթամարի Աթոռը յաջորդ կաթողիկոսներու օրով գարձեալ Մեծ մոռցուած և աննշանակ կացութեան մէջ մինչև ԺԸ. դարուն կէսերը։

Նիկողայոս Սպարկերտցի կաթողիկոսը (1736–1751) նոր փորձ մը ըրաւ Էջմիածնական վիճակներ գրաւելու, և օսմանեան կառավարութենէն հրովարտակ հանեց Վան, Բաղէշ, Մուշ և շրջակայ վիճակներ սեփականելու, և Էջմիածնի նուիրակն ալ վտարեց՝ հաւաքած արդիւնքները ձեռքէն առնելէ վերջ։ Ասոր վրայ Էջմիածնի կթղ. Ղազար Ջահկեցի (1737–1751) բողոքեց և Նալեան Յակոբ պատրիարքին (1741–1749, 1752–1764) միջոցաւ հակառակ հրովարտակ մը ստացաւ 1746ին, որով ոչ միայն յիշեալ վիճակները այլ և արդիւնքները ետ առաւ Նիկողայոս կաթողիկոսէն։ Ջահկեցի նաև բանադրեց Նիկողայոսը։ Աղթամարի վիճակայինները յուզուեցան և շատ մը հեռաորդներով Նիկողայոսը Էջմիածին դրկեցին որ արձակում ստանայ, խոստանալով «այնուհետև կաթողիկոսօք և վիճակաք ի հնազանդութեան սրբոյ Էջմիածնի» Մայր։ Ջահկեցին զիջաւ, Նիկողայոսը արձակեց և Աթոռին դարձուց, հրամայելով որ անկէ ետքը իրենք ուրիշ մէկը չօծեն այլ ընտրեալը Մայր Աթոռ դրկեն որ հոն օծուի։

Նիկողայոսի մահէն յետոյ սակայն Աղթամարցիք նորէն ինքնագլուխ կ'ընտրեն անոր յաջորդը Գրիգոր (1751–1761) անուն, և ժամանակին խառնակութեանց պատճառաւ մտադրութիւն չի գրաւեր իրենց արարքը։

Գրիգորի յաջորդը Թովմաս Բ. (1761–1783), թէև իրեններէն կ'ընտրուի բայց զանազան պատճառներէ հարկադրուած կ'երթայ Էջմիածին և ինքզինքը Ղազար կաթողիկոսի Նզովքին տակ խոստովանելով թողութիւն կը խնդրէ Յակոբ Շամախեցի կաթողիկոսէն (1759–1763)։ Շամախեցին սիրով կ'ընդունի Թովմասի ազերսը և հանդիսաւոր կերպով արձակում տալէ վերջ կոնդակով կը հաստատէ զայն իր Աթոռին վրայ,

digitised by A.R.A.R.@

միևնոյն ատեն կը նորոգէ Ղազարի և Նիկողայոսի օրով հաստատուած կանոնները։ Թովմաս միւռոն ալ կը ստանայ Ս. Էջմիածնէն։ Իսկ Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի օրով (1763–1780) Թովմաս դիմում մը կ'ուղղէ անոր, գանգատելով Աբրահամ Մոկացի վարդապետին դէմ որ քուրդ բռնապետ Աւտուլլայ Խանի պաշտպանութեամբ կ'ուզէր նոր կաթողիկոսութիւն հիմնել Մոկաց գաւառին համար։ Սիմէոն յաջողեցաւ զսպել այդ ձեռնարկին հեղինակները իր ձեռք առած կորովի միջոցներով։

Թովմաս Բ.ին յաջորդող Աղթամարի մի քանի կաթողիկոսներ տեղական ընտրութեամբ և օծմամբ Աթոռ բարձրացան և Էջմիածնի կթղ. Ղուկաս Ա. կարնեցի (1780–1799) չկրցաւ իր նախորդին օրով վերահաստատուած պայմանները գործադրել տալ, ժամանակին քաղաքական խառնութեանց յարուցած արգելքին պատճառաւ։

Բայց կ'երևի թէ հակառակ ատոր երկու Աթոռները բարեկամ էին իրարու. որովհետեւ Աղթամարի կթղ. կարապետ Վանեցի յատուկ հրաւէրով նախագահեց Էջմիածնի կթղ. Դանիէլ Ա. Սուրմառեցիի (1807–8) օծման ի Բագրեւանդ։

Աղթամարի կթղ. Յովհաննէս Շատախցիի (1823–1843) մահէն յետոյ Պոլսոյ պատրիարքարանը փորձ մը կ'ընէ Աղթամարի Աթոռը խափանելու, բայց չի յաջողիր։ Մոկացի Խաչատուր եպիսկոպոսը միաբանակիցներու խորհրդով և Մահմուտ Խանի պաշտպանութեամբ կաթողիկոս կը հռչակուի և կ'օծուի (1844–1851)։ Պատրիարքարանը արքունական հրամանով Խաչատուրը աքսորել կուտայ Շապինգարահիսար։

Խաչատուրի մահէն յետոյ Աղթամարցիք կրօնափոխութեան սպառնալիքով կը յաջողին պատրիարքարանի հաւանութիւնը ստանալ որ նոր կաթողիկոս մը ընտրեն։ Աղթամարցիներու ընտրելին էր Ս. Էջմիածնի եպիսկոպոսներէն Գաբրիէլ, որուն դէմ կ'ելլէ նախ՝ Պոլսոյ պատրիարքարանը, բայց յետոյ կը ստիպուի զիջիլ Աղթամարցիներու կամքին, սակայն խնդիրը կը տեղեկացնէ Ամենայն Հայոց Հայրապետ Ներսէս Ե. Աշտարակեցիին (1843–1857)։ Աշտարակեցին ալ. կ'ընդդիմանայ Գաբրիէլի կաթողիկոս օծուելուն և կը յանդիմանէ Կ. Պոլսոյ պատրիարքն ու ժողովները որ «կամակատար եղեալ խաժամուժին Աղթամարայ և խորհրդականին նոցա Գաբրիէլ եպիսկոպոսին Վանայ», իրենց սկզբունքը կը փոխեն և եկեղեցական օրէնքները կ'անարգեն։ Ատոր վրայ Գաբրիէլ եպս. օծումէ կը հրաժարի։ Բաւական ձգձգումներէ և բանակցութիւններէ վերջ պայմանագիր մը կը կազմուի, որուն համեմատ Աղթամարի կաթողիկոսը Կ. Պոլսոյ պատրիարքական կոնդակով պիտի հաստատուի, Մայր Աթոռին հպատակ պիտի մնայ և Էջմիածնի կաթողիկոսին անունը պիտի յիշատակէ, և ինքնագլուխ ոչ մէկ ձեռնադրութիւն պիտի չընէ։ Այս պայմանագրէն վերջ ճաճապարանօք, միայն մէկ եպիսկոպոսով կաթողիկոս կ'օծուի Պետրոս (1858-64), որ իր քաղցրաձայն երգեցողութեան համար կոչուած է Պիւլպիւլ (= սոխակ)։

Պետրոս Պիւլպիւլ իր օծումէն երկու օր վերջ 3 վարդապետներ եպիսկոպոս կը ձեռնադրէ։ Վեց տարի յետոյ անոնց վրայ կ'աւելնայ չորրորդ մը ալ Յովսէփ եպս. Խոստեղեան։ Ասոնք Պօղոնեսցի Խաչատուր Շերոյեան եպիսկոպոսի գլխաւորութեամբ Պետրոսը պաշտօնանկ կ'ընեն, և տեղը կը բարձրացնեն Շերոյեանը (1864–1895) որ հայադաւան ատորի մըն էր խորամանկ ու ճարպիկ։ Պետրոս կթղ. վիրաւորուած վիճակի մէջ կ'ապաստանի իր եղբօրորդւոյն տունը և նոյն գիշեր ատրճանակի ու դանակի հարուածներով կը սպաննուի նոյն տան մէջ երկու քիւրտերու ձեռքով։

Պոլսոյ պատրիարքարանը չեղեալ կը նկատէ Շերոյեանի կաթողիկոսացումը, իբրեւ ոչ մէկ օրինական պայմանի լրացումով իրագործուած, և տեղապահ կը կարգէ Վանի առաջնորդ Իգնատիոս եպս. Գագմաճեանը։

Այս ատեններ Ս. Էջմիածնի Մայր Աթոռին կաթողիկոս կ'ընտրուի Գէորգ Դ. (1866–1882), որուն տակաւին Պոլիս գտնուած պահուն՝ Աղթամարի Աթոռին խնդիրն ալ կը ներկայացուի իրեն, ըստ յատուկ մանաժողովի մը ներկայացուցած առաջարկներուն, որոնց մէջ Աղթամարի վերաբերող կէտերն են. 1. Աղթամարի կաթողիկոսը ընտրել վիճակային ժողովով և Կ. Պոլսոյ Ընդհ. ժողովով և Ամենայն Հայոց Կաթողիկոսին առաջարկել ի վաւերացումն և ի հաստատութիւն։ 2. Օծումը կատարել Էջմիածնի մէջ։ 3. Եպիսկոպոսաց ձեռնադրութիւնը Ամենայն Հայոց Հայրապետի գրաւոր

digitised by A.R.A.R.@

հաւանութեամբ կատարել։ 4. Թէ կաթողիկոսի և թէ վիճակաւորներու կողմէ յիշատակել Ամենայն Հայոց Հայրապետը։ Գէորգ Դ. ասոնց գործադրութիւնը կը յանձնէ Պոլսոյ պատրիարքին. բայց գործնականապէս ոչէ փորձ չի կատարուիր։

Պոլսոյ մէջ խնդիրը զանազան փուլերէ կ'անցնի և ի վերջոյ արդիւնքը տպագրեալ տեղեկագրով մը հրապարակ կը գրուի։ Գէորգ Դ. այդ տեղեկագրին դէմ քննադատական կոնդակ մը կ'ուղղէ Պօղոս պատրիարքին (1863–1869) և կը պնդէ որ Աղթամարի Աթոռին յարաբերութիւնը Մայր Աթոռին հետ ըլլայ հպատակական, հակառակ պարագային կը սպառնայ Աղթամարն ալ, ինչպէս Սիսը, «թողուլ ըստ առաջնոյն ի թիւս հակաթոռ և ապօրինաւոր կաթողիկոսաց սարտուցելոց ի գրկաց մօրն լուսոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի»։

Երբ Պոլսոյ մէջ այս անցուդարձերը տեղի կ'ունենային Ներսէսեան կը շարունակէր իր կաթողիկոսութիւնը վարել Աղթամարի մէջ, մինչ պատրիարքարանը տեղապահը փոխած և Գալաթիայի տեղ նշանակած էր Աղթամարի միաբան Ցակոբ եպս. Թօխուզեանը։

Երբոր Խրիմեան Մկրտիչ Պոլսոյ պատրիարք եղաւ (1869–1873) Գէորգ Դ. անոր ուղղուած կոնդակով մը չեշտեց իր տեսութիւնները և պահանջները ինչպէս Սիսի նոյնպէս և Աղթամարի Աթոռին վերաբերմամբ, բայց Պոլսոյ Ընդհ. Ժողովը այդ կոնդակին պաշտօնական ընթերցումն անգամ չթոյլատրեց։ Գէորգ Դ. ժամանակ Պոլսոյ բռնած ընթացքէն շարունակեց իր ուղղութիւնը և Սիսի հետ Աղթամարի Աթոռն ալ «հակաթոռ և հետաեալ» կոչեց իր փոփոխած հաւատարմութեան երդմնաթուղթին մէջ։

Ներսէսեանի խնդիրը երկար քննութեանց և դատավարութեանց առարկայ եղաւ։ Խաչատուր կթղ. 1868ին եկաւ Պոլիս, քննութիւն և վերաքննութիւն առին տարիներ, մինչ Աղթամարի թեմականները կը շարունակէին Խաչատուրի հաստատութիւնը պահանջել, և պատրիարքարանը զիջողութեան ստիպելու համար մինչև իսկ կրօնափոխութեան սպառնալիքներ կ'ընէին։

Երբ Ներսէս Վարժապետեան բարձրացաւ Պոլսոյ պատրիարքական Աթոռը (1874–1884), իր առաջին գործերէն մին եղաւ կարգադրել Աղթամարի խնդիրը որ արդէն տարապայմանօրէն երկարած էր։ Քաղաքական և կրօնական ժողովներ վերստին կը քննեն Խաչատուր կաթողիկոսի յանցապարտութիւնը մանաւորաբար Պետրոս կաթողիկոսի սպանութեան գործին մէջ։ Ինքը ուրացած էր իր մասնակից ըլլալը և հակառակը կարելի չէր եղած ապացուցանել վկաներու միջոցաւ։ Ուստի 1875 Դեկտ. 4ին Խաչատուր «երդմամբ կը յայտարարէր յանուն Աստուծոյ և խղճի թէ Պետրոսի սպանութեան մէջ մասնակցութիւն ունեցած չէ և մաքէ անգամ անցուցած չէ»։ Այս յայտարարութեան վրայ Խաչատուր անպարտ կը հռչակուի և կ'ընդունուի իբր օրինաւոր կաթողիկոս Տանն Աղթամարայ։ Խաչատուր կը փութայ յայտարարութիւն մը ալ ստորագրել թէ ըստ ամենայնի հնազանդ է Մայր Աթոռոյ Էջմիածնի։

Ներսէս պատրիարք Աղթամարի խնդրին վերջնական որոշումը խնդրելով դիմած էր Գէորգ Դ. կաթողիկոսին, որ կոնդակով մը կը պատասխանէ և կը յորդորէ «փութալ ճեպել խպառապուռ բարձումն երկրորդական և երրորդական աթոռոց կաթողիկոսական անուանելոց»։ Բայց իր այս յորդորը մէկ կողմ կը ձգուի, որովհետև Պոլսոյ պատրիարքն ու ժողովները համամիտ չէին Սիսն ու Աղթամարը ջնջելու։

Այսպէս 1864–1876, տասներկու տարի քաշքշուելէ յետոյ կը վերջնար Ներսէսեանի գատաստանական խնդիրը և հրովարտակը կ'առնուէր։ Ան Պոլսոյ մէջ կը կատարէր հանդիսաւոր պատարագներ ու ապա կը մեկնէր իր Աթոռը, թէև Գէորգ Դ. կը շարունակէր ալ իր ճանաչումը։

Մակար Ա. երբ եղաւ կաթողիկոս Ամենայն Հայոց (1885–1891), վերցուց Գէորգ Դ. կաթողիկոսէն մուծուած յաւելուածը և Աղթամարի Աթոռին հետեալ ու անվաւեր հռչակումը վերջ դնաւ։

Ներսէսեանի կաթողիկոսութիւնը տեւեց 31 տարի և ծեր տարիքով վախճանեցաւ 1895 Դեկտեմբեր 22ին։ Ըստ Օրմանեանի ան «աշխարհէ մեկնեցաւ առանց գովանի յիշատակ մը և առանց արդիւնք մը թողլու իւր ետեւէն» (Ազգապատմ էջ 5048)։

Ներսէսեան եղաւ Աղթամարի վերջին կաթողիկոսը, իրմէ յետոյ Նոր մը չընտրուեցաւ և այդ կերպով դադրեցաւ սոյն կաթողիկոսութիւնը 782 տարի տեւելէ վերջ (1113-1895)։

Աղթամարի կաթողիկոսական Աթոռը կը պարունակէր Վանի և Բաղէշի կուսակալութեանց մէջ գտնուող տասներկու թեմեր, որոնք էին, Հայոց Ձոր, Ոստան, Կարճկան, Շատախ, Մոկք, Խիլան, Կարկառ, Կեցան, Սպարկերտ, Մամռտանք, Շիրվան և Գահատան։ Զուրկէր քաղաքներէ։ ունէր 194 գիւղ, 57 վանք, 272 եկեղեցի, վանականները մէջն ըլլալով, և իբր 100,000 ժողովուրդ։

Ն. Վ. Գ.

digitised by A.R.A.R.@

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՊԱՏԳԱՄԸ(*)

Վարագոյրը չէ իջած։ Բայց բեմը լեցնող ձեւերուն մէջ, խաղցր ու ծանր յուզիչը խորհուրդին ուր անհանգիստ ու շուար վիճակին տեղ՝ եղբայրացնող, դաշնաւորող վստահութիւն մը։ Թրթռում, խաղը յոյսերուն զսած են իրենց հանգիստը։

Անհերեւոյթ բայց զգալի ձեռք մը կը ծաղկ Արարատի ստուերը, դանդաղ բայց տպաւորիչ։ Տեսիլքին շարժուն կէտերները կ'ամփոփուին, կը նստին։ Մշուշը չման փարատած է։ Ու հաղումի, հեռացումի, պայծառակերպման զգայուրիւններու հետ կը յառնէ, յատակին դէպի ետ, դանդաղ ամբարձումով մը

— ԵՐԵՒԱՆԸ։

Որ վարագոյր է բեմին խորքը պարուծակող։

Նախաբեմը՝ կոթողը զոր կիսաղեղի մէջ կ'առնեն ողջերն ու նկուղները։

Լուսաւորիչը աւելի դեղնած, եթերացած, յոյսի եւ միսի տեսակ մը անգայտ կերպարանք։

Մեղմ, տարիքի շեշտով։ Անիկա կը տեսնուարդ, առանց բառի, հորիզոնին չորս ծագերը։ Պատգամը օրհնաբերութեան մը գնացքով, որ տակաւ պիտ ջերմանայ, ազդելով ձայնին, շարժումներուն։

ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ

Փառք, օրհնութիւն երջանկութիւն
Խորհրդային մեծ միութեան
Համհաւասար աշխարհներուն
Մէկն որոնցմէ
Հայաստանն է Խորհրդային։
Թող աչն անտես կենայ պաշտպան
Անոր ամբողջ ծեռնարկներուն,
— Մարդերն ընել ազատ՝ պէտքէն,
Ու պակասէն սուրբ ցորենին։
Մարդերն ընել իրար եղբայր
Կրօնքին մէջն աշխատանքին.
Լսեցէք լա՛ւ
Դո՛ւք, մեռելներ որ սրտադիւր
Իջաք կայքէն ծեր երկնաւոր,
Հաղորդ գալ ծեզ կանչողներու
Ապրումներուն։
Ու դուք ողջեր
Որ հեղեղին դիմաց ցաւին
Ու ծովերուն մէջ զրկանքին
Փաստը տուիք ազնուական
Ձեր առնութեան,
Դո՛ւք, ժողովուրդ հնոց նորոց
Հայաստանին,
Ունիմ ծեզի խօսքն իմ՝ հաստուն
Մէջն արեւին երկինքներուն։
Ձեմ դառնար ետ, աստուածակերտ
Ամբարձումէն էջմիածնին
Տօնը մինչեւ մեր օրերու
Գարնանամահ վկաներուն։
Ձեմ բանալու դիւանն անբաւ
Ազնիւութեան, հերոսութեան
Ձեր պապերուն։
Ձեմ մեկնելու գիրն ալ ճակտին
Ձեր բոլորին
Տարբեր՝ գիրէն ծեզի ծանօթ
Շատ ազգերու որակուած մեծ։

(*) Հաւատամ՝ Օշականի՞նոր գործէն, ՕՐՆ ՕՐԵՐՈՒՆ, (Ապրիլ 24ի ոգեկոչումին առիթով ամայիի մը մէջ. կոթողի մը տուրբ հաւատուած են ողջերն ու մեռելները; Հոգեհանգիստը կատարելու համար իմիր, Ս. Գրիգոր Լուսաւորիչի եկած է տեսարան։ Հոգեհանգիստէն յետոյ, վարագոյրը կը վերածուի Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքին, Երեւանի ուրուապատկերին։ — Լուսաւորիչ կ'արտասանէ ՊԱՏԳԱՄԸ)։ [Հրատարակելի Ս. Թ. Շրջանաւարտից Միութենէն, Մաշենաբար թիւ 2]։

digitised by A.R.A.R.@

Կը խաչուի միշ մը եւ ձայնն ի վար, շունչ առնելու, հանգչելու պահի մը մէջ. մինչ իր գլխեն խոյրը միշ միշ կը հեռանայ, երեւան բերելով դասական կաղապարը հայ ծերութեան, օծուն, մեղմ բացութիւնը զանկերուն։

Իմ բերանով
Պապերը ձեր, այնքան անուշ,
Այնքան դժբախտ բայց միշտ արի,
Կը հաղորդեն, սա սուրբ ժամուն
Գորովն իրենց, կարօտն իրենց
Ձեր բոլորին,
Ու կը պատմեն ցաւն իրենց խոր
Որ չլքեց սիրտերն իրենց
Հողերուն ծոց,
— Հա՜մայնական ցաւն անաւոր
Մեր ժողովուրդը զգետնող,
Ցաւը իրար չրսիրելու։
Անվերադարձ վերջն է հիմա
Այդ ամենուն։
Ձեզ պատգամներ ունիմ տալու։
Մէ՛կն անոնցմէ
— Սէրն է կեանքին, զայն պայմանող
Աշխատանքին։
Մէջն էք պարտքին դուք աննահանջ
Հաւատարիմ սպասն անոր
Կատարելու,
Միջոցներովն համայնական
Ակօսներէն ձեր արտերուն
Արգանդներէն ձեր հողերուն,
Մարմիններուն։
Սէ՛րն է կեանքին որ դիմաւո՞ր՝
Մահուան բոլոր զինուորներուն։
Միւսն իմ խորունկ պատգամներէն
— Սէրն Ոգիին,
Որ կը հագնի կերպարանքներ՝
Գիրի, քարի, մագաղաթի
Հեղուկ ծայնի,
Ստեղծումին արգանդներէն
Նախնիքներուն՝
Քանի անգամ
Գերեզմանէն ձեր պատմութեան
Ծնո՞ղ՝ կեանքին ձեզ վերստին։
Ու սէրն արեան, անվերադիր,
Որ իրարու կը շաղկապէ
Ամբաւ դաշտերն ապրումներուն,
Դարերը ձեր իրերահաշտ
Ընծայելով,
Ողջն ու մեռելն եղբայրօրէն
Հաւասարող։
Սէրն այդ հրգօր ձեզ խօսեցան
Ամէն դարու
Բերանները ձեր մեծերուն։
Ու դուք գիտէ՞ք
— Զպակսեցաւ ան երդին տակ
Հիւղակներուն,
Պարզ սիրտերուն շինականին։
Ու դուք գիտէ՞ք
— Ան պակսեցաւ իշխողներուն,
Սեղաններուն
Զորցընելով աշխարհը մեր։
Սէրն այդ հզօր,
Հայ ժողովուրդ,
Փառքին մէջէն հայրենիքին
Պէտք է դառնայ կիրքդ ահաւոր,
Սրբագրելու
Էջերն անարգ մեր պատմութեան։
Իմ բերանով
Հայրենիքը մեր վերածին
Սէրն այդ հրգօր
Կ'առաջարկէ սպեղանի
Դարաթաւալ մեր վէրքերուն։
Գիրն է բացող մեր պատմութիւն
— Անմիութիւն ծնող չարեաց —։
Պարտք աննահանջ ձեր բոլորին
Կոտրել տախտակն այդ լրբութեան
Փշուր փշուր,
Ու փորագրել ճակատներուն
Ձեր բոլորին
— Միութիւն՝ մայր է բարիքի —
Դուք, թեւ թեւի ու սիրտ սիրտի
Ու խելք խելքի,
Դրախտ մը նոր, փոխան կորած
Դրախտներուն մեր հէքեաթին
Ու պատմութեան,
Պիտի կերտէք, թշուառութեան
Ու գերութեան սա հովիտէն
Անունն որուն այդպէս անցեր
է դարերուն։
Վերջն է ատոնց, իմ եղբայրներ։
Օրն օրերուն կ'ընենք սկիզբ։
Թող մեռելներն իշնան խաղաղ
Իրենց քունին ու երազին։
Ու թող ողջերն հպարտանան
Թրջուցընելով,
Խեղճ Սփիւռքի չորս ծագերուն,
Պատգամն ազնիւ, պատգամը սուրբ
Հայրենադարձ հրաւէրին։

digitised by ARAR@

Ըսուի սուգին մէջ նստողին
Թիթեղ տանիք անիծողին,
Թէ վախճանն է այդ ամենուն:
Բացուեր դռներն հայրենիքին
Զաւկընեռուն իր անխրտիր,
Իմաստունին ու տկարին,
Մեծատունին ու տնանկին,
Թէժ պատանուն ու ալեհեր
Պառաւներուն:
Բաց անդաստանն է հայրենեաց
Աշխատանքին ու բազուկին:
Երամ երամ,
Փաղանգ փաղանգ,
Բանակ բանակ
Դէպ բլուրներ ու դէպ լեռներ,
Ձեր մօր կուրծքին,
Խորհրդային Հայաստանին
Որ,
Կը գոցէ արդ զաւկընեռուն
Իր արիւնով
Եւ օգնութեամբ եւ զօրութեամբ
Հիւսիսի մեծ, արիարանց
Իր պաշտպանին,
Անվերադարձ
Գիրքը մռայլ մեր գերութեան:
Ու կը լուծէ խորն արիւնին
Նուիրական,
Հայրենիքին համար ինկած
Հերոս բոլոր զաւկընեռուն,
Շղթաները ժանտ, դարաւոր
Որոնք դարբնող սային վրայ
Հին հէքեաթին,
Մուրճերու տեղ կ'իյնայ քրտինքն
Ըլլալ ոսկի,
Նոր գինուորին
Աշխատութեան մեծ բանակին:
Նման արի ծեր պապերուն,
Նման քարի ծեր պապերուն
Աշխատանքի՛, ստեղծումի՛,
Կառուցումի՛, ամբարձումի՛
Հողին վրայ ծեր պապերուն:
Հայրենիքն է, Հայաստանն է
Խորհրդային
Որ կը կանչէ ծեզ իմ բերնով:
Արի, արդար,
Ձեր սիրտն առա՛ս,
Ձեր միտքը բա՛ց
Ողորմութեան եւ գիտութեան:
Երգէ դպիր, երգն հեռանուշ
Արքաներու շրթունքներէն
Օր մ'արձակուած
Փառքին դիմաց մարմարակերտ
Էջմիածնին,

Հիմը նորոգ, հիմը խորունկ
Երբ կը նետէր
Ճարտարապետը երկնաւոր
Արտերուն մէջն հոգիին մեր,
Հիմը նորոգ
Արդարութեան ու բարիքին,
Նոր կրօնքին,
Խաղաղ սրտին,
Կուշտ սեղանին
Ցոյսն յարութեան
Կամարելով երկրէ երկինք:
Ճարտարապետն արդ երկրաւոր
Իմ բերանով
Աշխատանքը կը պատգամէ
Կրօնքը նոր:
Կ'ըսեմ ծեզի
— Զխառնուի արդարութեան
Ձեր վաստակին
Կութքը դաժան անգութ շահին,
Եւ անարդար կողոպուտին:
Թիլն իսկ խոտին, օտարներէն
Ձիյնայ կալին քու հայրենի,
Իմ ժողովուրդ:
Ձեռքդ երկարէ չունեցողին,
Տուր ցոյց ճամբայ մոլորեալին.
Հասիր, անծայն տառապանքին
Քուկիններուն եւ օտարին,
Ինչպէս ըրին պապերը քու:
Հպարտ, անուշ, բարձր ճակա՛տ
Բանակներուն դէմ չարքերուն,
Եղան ինչպէս պապերը քու:
Հոգիդ աղբիւր հազարակնեան
Սիրոյն քու սուրբ,
Կանչըւորել սիրտերը խուժ,
Արգիլելով ահուն հունտին
Ատելութեան, սեւ նախանձին:
Դուն երգեհոն, նոր օրերու
Որուն անթիւ ստեղներէն
Հոսին երգեր, տաղ, շարական
Ազնուական եղբայրութեան.
Մեծատարած ու սրբազան
Եղբայրութեան ազգերէ ազգ
Որով միայն պիտի գիտնայ
Մարդն ըզգեստել
Բանակն ամբաւ չարիքներուն,
«Արդարութիւն եւ սէր տնկել»
Ինչպէս կ'ըսէ աղօթքը հին:
Երգէ դպիր, երգն հեռանուշ
Թրուած բերնէն արքաներու,
Բայց վանկն որուն
Դեռ անթառամ, հոգիներէն
Ներս ամենուն
Կ'ապրի ինչպէս անժանգ ոսկի:

digitised by A.R.A.R.@

ԽՈՒՄԲԸ

Եկայք, շինեսցուք
Սուրբ ըզԽորանըն Լուսոյ:

ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ

Խորանին հետ լոյսերուն հին
Նոր ատրուշան անմահ Լոյսին,
Ոստանն ազատ Խորհրդահայ Հայրենի-
— Խորանը նոր հրկայական [քին:
Ուր պիտի գան բազմիլ փառքով
Նոր որդիներն Աստուածներուն,
Լոյսը կարմիր,
Սկիհն հացին մեր ցորենին,
Ու գինիին այգիներուն,
Եւ աղաւնին իմաստութեան.
Արդարութիւնն համատարած,
Խաղաղութիւնն
Հիւղէ ի հիւղ, երկրէ երկիր,
Ազգերէ ազգ,
Լուսանորոգ այգին մէջ խոր
Եղբայրութեան Խորհրդային:
Թող անսասան,
Թող անվախճան
Նախախնամուին
Նոր պետութիւնն Հայաստանեայց
Բազկոփն անյաղթ զաւկրներուն
Օրինակին մէջ իր նահատակ
Հերոսներուն.
Անունովը Հօր եւ Որդւոյ
Եւ սուրբ Հոգւոյն,
Ապրո՛ղ՝ արեան մէջ ամենուս
Դարեր առաջ ու դարեր վերջ:
Հիմա, հանգի՛ստ,
Բոլոր ցաւած եւ անսփոփ
Հոգիներուն:
Մէջն իմ ծայնին՝ ե՛ի՛չը մանկան,
Հո՛ւրքը մատաղ պարմաններուն,
Կա՛մքն անսասան մեր մայրերուն,
Ու քաջութիւնն զինուորներուն
Ուղե՛ղն հզօր իմաստունին,
Գիւտն ու հնարքն ըստեղծողին:
Մէջն իմ ծայնին ազգն իմ ամբողջ,
Այգն է ահա մութին մէջէն
Որ ցայգաստիւռ կ'ոսկիանայ,
Այգը կարմիր
Աշխատանքին, ազատութեան,
Արդար հացին
Եւ անշրջեթայ, անհունարձակ
Ստեղծումին:
Քու սուրբ դերիդ, իմ ժողովուրդ,
Մինչեւ ըլլան հողերն ոսկի,
Ցորեններով ըզգեստաւոր,
Ամէն թիզի:
Ամէն բլուր նարօտ կապէ
Ու ամէն ջուր՝
Երակներէդ, զովութիւնն իր
Կապոյտ կապոյտ սահեցընէ,
Դառնայ արծաթ
Պալատներուդ, հիւղակներուդ
Պատէն վազող, զերդ մարգարիտն
Հին հէքեաթին:
Ցառնեն ծայնէն կըռունկներուդ
Բոլոր անոնք որ արիւնէդ
Իբրեւ կաթիլ օր մը ինկան
Կեանքին լոյսին, ու շինեցին
Համրիչը հուր քու պատմութեան,
Թեզ օրհնաբա՛ն՝ քու անցեալէդ
Ու քեզ պատգամ՝ ապառնիդ:
Ու դուն աղուր, ու դուն ազատ
Ու դուն հզօր՝
Ձեռքդ երկարած քու հիւսիսի
Մեծ պաշտպանին,
Մոխիրներէդ իբրեւ փիւնի՛կ,
Մա՛յր բախտաւոր,
Առնես ծոցիդ քու զաւկրներդ
Քու իսկ մատով հրաշակերտ
Նոր դրախտիդ,
Խորհրդային հայրենիքին:
Սիրտն իմ աղբիւր մաղթանքներու
Դարեր վազող ու չըսպառող:
Եղէք օրհնեալ, գացէք խաղաղ,
Տուները ձեր, ողջ ու մեռեալ,
Ապրեցնել արիւնը ձեր
Ցաւիտենէ մինչ յաւիտեան:

Լռութիւն:

Լոյսերը կը նստին: Մութը չի զար: Կոթողը մեծ մոմի է փոխուած ու կ'այրի:

Անկի թխող կոծկոծուն ու կիսաւուր շառաչին մէջ ողջն ու մեռեալ կը խաչեն խորհրդաւոր դէպի աջակողմը բեմին ուր կամարակապ մուտքը կը հիւսուի կրկին առաջին պատկերին:

Բեմի խորքին մեծ վարագոյր մը վերեւն կարմրորակ պատանի մը պէս կ'իջնայ դանդաղ, խաղաղին վրայ. թափանցիկ ու աղուոր: Այդ շղարշին տակ խաղաղը ընդարձակ բռնկում մըն է որմէ ներս շնչերուն բարձր մասերը կրակէ ելզուակներու նման կը բացուին ու կը զոցուին:

Ամենեն վերջ խումբը: Իր եսերեն

ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ

Անուամբ Հօր եւ Որդւոյ
Եւ Հոգւոյն Սրբոյ:

(վերջ)

digitised by A.R.A.R.@

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱԲԳԵՆԻ ՄԱՏԱՆԻՆ

Ստորև զետեղուած պատկերին մէջ կը տեսնուի մատանի մը որ այժմ կը գտնուի Երուսաղէմի Պետական Թանգարանի Զարդեղէնաց Բաժնին մէջ։ Այս պարզունակ մատանին կամ կնիքը երևան եկած է 1936ին Սուճա Հաֆիրի Զ. դարեան եկեղեցւոյ աւերակներու տակէն երբ Երուսաղէմի Թանգարանի Վարչութիւնը պեղումներ կը կատարէր հոն։

Սուճա Հաֆիր կը գտնուի Երուսաղէմէն դէպի Եգիպտոս երկարող ճանապարհի 162ոդ քիլոմէթրին վրայ, Պաղեստինի և Եգիպտոսի սահմանագծին մօտ բլուրի մը վրայ։ 1870 թուականէն ի վեր քանիցս հնախոյզներ այցելած են այս պատմական վայրը և ուսումնասիրութիւններ կատարած բիւզանդական շրջանի աւերակներուն մէջ։ Այս ուսումնասիրութիւնները վերջին պեղումներու արդիւնքներուն հետ միասին բաւական ընդարձակ պատմական տեղեկութիւններ ընծայած են տեղւոյն անցեալի մասին։ Գիտենք թէ ի հնումն հոն գոյութիւն ունեցած է բանուկ գիւղաքաղաք մը որ յետոյ հռովմայեցւոց տիրապետութեան ատեն ընդարձակուելով մինչև բլուրի գագաթը, իր ամուր բերդով, դարձած է ուժիկանական և զինուորական կարևոր կայան մը։ Պեղումներէն որոշապէս յայտնի է թէ բերդը կառուցուած էր լերան գագաթին վրայ, դեղնագոյն կրաքարով, և ունէր չորս աշտարակներ չորս անկիւններուն վրայ և երկու մուտք, մին մեծ՝ հարաւային երեսին վրայ և միւսը փոքր՝ արեւելեան, և թէ այս փոքր մուտքէն դէպի լերան ստորոտը կ'երկարէր քարէ աստիճանաշարք մը։ Անտարակոյս բերդը իր սիրուն տեսքով կը տիրապետէր իր շրջակայքին վրայ և վեհութիւն կուտար քաղաքին։

Ե. և Զ. դարերուն երբ Եգիպտոսի և Պաղեստինի անապատները կը զարդարուէին վանքերով ու եկեղեցիներով այժմեան Սուճա Հաֆիրի հնադարեան քաղաքին մէջ կը կառուցուին երկու եկեղեցիներ, մին բերդի հիւսիսային անկեան քով որ այդ պատճառաւ Հիւսիսային Եկեղեցի կոչուեցաւ և միւսը մօտակայ բարձունքին վրայ յարակից չէնքերով՝ ուխտաւորներու և ճամբորդներու համար։

Վերջին պեղումներու ատեն յայտնի եղաւ նաև որ Հիւսիսային եկեղեցին ներքուստ գեղազարդուած է եղեր — յատակը մարմարիոնով ծածկուած և ծիրանեգոյն, դեղնորակ ու սև քարերով զարդարուած. խաչկալը մարմարիոնեայ և քանդակուած.. պատերը կարմիր, դեղին և սև իւղաներկ զարդագծերով ծածկուած։

Երկու եկեղեցիներու մէջ գտնուած են 150ի մօտ արձանագրութիւններ — տապանաքարերու, յուշարձաններու եւայլն։ Ասոնք 464էն 630 թուականները կը կրեն։ Գերեզմանական յուշարձաններէն հնագոյնը ունի 436 թուականը։ Հիւսիսային Եկեղեցւոյ մէջ գտնուած արձանագրութիւնները ընդհանրապէս Ս. Սարգսի բարեխօսութիւնը կը հայցեն. մի քանի հատին մէջ Ս. Ստեփանոսի և մէկին մէջ ալ Ս. Գէորգի հետ։ Ակէ կ'ենթադրուի որ Հիւսիսային Եկեղեցին Ս. Սարգսին նուիրուած էր։ Առանձին արձանագրութեան մը մէջ Ս. Կոյսի բարեխօսութիւնը կը հայցուի և անոր մէջ Ս. Կոյսը կը կոչուի «Մայր Աստուծոյ, Մարիամ»։

Մերներկայացուցած մատանին գտնուած է Հիւսիսային կոչուած այս Ս. Սարգսի աւերակներուն մէջ, մի քանի ուրիշ արժէքաւոր հնութիւններու և 40 գլան պապիւրոսներու հետ միասին՝ որոնք կը կրեն յունարէն և արաբերէն գրութիւններ։ Ցունարէն գրութիւններէն մին կալուածական վաւերագիր մըն է, գրուած Ցուստինոս Բ. կայսեր օրով 565–578 թուականներուն և կը յիշատակէ կայսեր անունը։

Ցունարէն ուրիշ արձանագրութիւն մը կը նկարագրէ Ս. Գէորգի յարութիւնը։ Արաբերէնները տուրքերու վերաբերեալ պաշտօնական հրահանգներ են ուղղուած Նուսարի ժողովուրդին։ Անոնց մէջ հնագոյնը կը կրէ 675–76 թուականը։

Պապիւրոսներու այս գրութիւններէն կը յայտնուի թէ աւերակ քաղաքին անունը Նուսար էր։

Մինչև Է. դար Նուսար, իր երկու եկեղեցիներով, վանքով ու քրիստոնեայ հայանքով Սինայի և Յորդանանի սրբատեղեաց և վանքերու ուխտաւորներու գլխաւոր կայանն էր։ Անտարակոյս Ե. և Զ. դարե-

digitised by A.R.A.R.@

բու այդ ուխտաւորներու մէջ գտնուած են նաև հայազգի բարեպաշտներ և վանականներ։ Է. դարէն յետոյ դժբախտաբար Նուսար հետզհետէ կը նսեմանայ իսլամական ազդեցութեան տակ և 634էն յետոյ ամայանալով՝ կ'աւերականայ։

13ՐԴ դարու խեցեղէն ամաններու ներկայութիւնը աւերակներուն մէջ ցոյց կու տայ թէ այդ թուականներուն տակաւին բնակչութիւն կար Նուսարի մէջ։ Անցեալ դարուն, 1870ին, երբ E. H. Palmes և C. F. Tyrwhitt Drake կ'այցելեն քաղաքը աւերակացած և ամայացած կը գտնեն զայն թէև ոչ այնչափ որչափ այսօր։

Այս պատմական տուեալները հետաքրքրութեամբ կը չրջապատեն մեր մատանին, որ ինքնին ինչպէս կը տեսնուի, հնութեան դրոշմ կը կրէ արդէն։ Վրայի բոլորակին վրայ փորագրուած կը գտնենք մօրուսաւոր, կնդուղով ծածկուած և լուսապակ գլուխ մը և անոր շուրջ ԲԱԲԳԵՆ անունը։

Ո՞վ կրնայ ըլլալ այս լուսապակ «Բաբգեն»ը։ Ս. Սարգսի արձանագրութեանց թուականներուն նայելով կարելի՞ է ըսել Բաբգեն կաթողիկոս!։ Ի՞նչ գործ ունէր անոր մատանին կամ աւելի ուղիղ կնիքը Ե–Զ դարու անապատի Ս. Սարգսին մէջ։ Կը սպասենք լուսաբանութեան։

Կ. Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԿԻԼԻԿԵԱՆ ԱՄՐՈՑՆԵՐ(*)

ԿՈՐԻԿՈՍ

Ա.— Գաւառը. Բ.— Քաղաքին դիրքը. Գ.— Քաղաքին անունը. Դ.— Քաղաքին եկեղեցիները. Ե.— Քաղաքին գերեզմանոցը. Զ.— Մասասուունը. Է.— Քաղաքին բերդերը. Ը.— Բերդատեր իշխանները. Թ.— Պատմութիւնը։

Ա.— Գաւառը. Կորիկոս կը գտնուի Կիլիկիոյ միջին կամ Տարսոնեան ծովափունքի Վարչագ գաւառին մէջ, Միջերկրական ծովու արեւելեան աւազանի ափին վրայ, Սելեւկիայէն (Սիլիֆքէ) 45 քլմ. դէպի հարաւ-արեւելք, երբեմն ծովանիստ կարևոր բերդաքաղաք, այժմ ամբողջովին աւերակ, անկենդան ու ամայի։ Գաւառս ծովեզերեայ անձուկ սահմանով, կը ներկայացնէ Կիլիկիոնս և Կիւղնոս գետակներու հովիտը, արեւմուտքէն արեւելք իր քառասուն մղոն երկարութեամբ, իսկ լեռնոց գագաթներէն մինչև ծով 25 մղոն լայնութեամբ։ Վարչագ գաւառին բարձրաբերձ լեռները երկրին կ'ընծայեն բաւական թիւով գետակներ ու վտակներ՝ որոնց գլխաւորն է Լամոս, որուն անունով գաւառին մէկ մասը կոչուած էր Լամոսեան։ Հայր Ալիշան նկատելով որ գաւառի բովանդակ տարածութիւնը մեր նախնիքներէն առանձին անունով մը կոչուած չէ, հետևելով ԺԵ. դարուն Կիլիկիա այցելող Ֆրանսացի Պերդրանտոն ուղեւորի ծանօթութեանց, որով կը գրէր թէ Գարամանի աւատատպետները կ'ի՛չխէին Նմանապէս Տարսոնէն մինչեւ Կոռիկոս երկարող և մինչեւ Զաբարի (Zabari, Զեփիւռիոն) Նաւահանգիստը հասնող և Ֆարսաց կոչուող երկրին, կը հետեւցնէ որ ուղեգիրը կ'ուզէր Վարչագ ըսել ու գրել, վասնզի ցարդ այդ կողմերու լեռները Վարչագ կամ Վարսագ Տաղը կը կոչուին, թերևս գոյութեամբը այդ լեռնե-

(*) Տես Ա.Ճանիկ Ա. Զօպանեանի՝ Բարիզ, 1939, Ծ.դ. տարի թիւ 3, էջ 11։

digitised by A.R.A.R.@

բուն վրայ յովազներու։ Անգղիացի ճանապարհորդ Hamilton այդ կողմերը այցելած ատեն գաւառին բնիկները իրեն բերեր են նոր զանուած յովազի մը մորթը։ Ալիշանի վարկածը տկար է։ Նախ որ Կիլիկիան մեր ազգային շրջանի ընդարձակ մատենագրութեան մէջ չենք հանդիպիր և կարելի ալ չէր հանդիպիլ նման օտար անունի մը և թէ յետին դարու պատահական անուն մը ներելի չէ ընդհանրացնել զինուորական, կրօնական, առևտրական և մատենագրական մեծ ու պատմական արժէք ունեցող գաւառի մը, որպիսին է Կոռիկոսի շրջանը։ Կոռիկոս՝ իբր զինուորական, ռազմագիտական և մեծապոլիտական կեդրոն, արդար ու բնական պիտի ըլլար իր իսկ անունովը կոչել ամբողջ գաւառը, հոգ չէ թէ Պռականա և Սանդիլիա կամ Սեւիլա բերդերն ալ, իբր երկրորդական ամրոցներ, գտնուած ըլլան նոյն գաւառին մէջ։ Էնցիկիմիրի արշաւանքէն շատ յետոյ, Թաթարներ կը տիրեն գաւառիս և իրենց պէկերէն մին՝ Օյուզ՝ լեռներու մէջ դարանկալ, յանկարծակի կը յարձակի (1470–71) Օսմանցւոց քանակին վրայ և թուրք զօրաց կէսը կոտորելով կը փախցնէ Մուհամմէտ փաշա մեծ վնասիրը։

Բացի Կալիւկադնոս գետակէն՝ որ աւելի Սելեւկիա գաւառի յատուկ է, Կոռիկոս գաւառիս մեծագոյն գետն է, ինչպէս տեսանք, լայնս, 15–20 մղոն երկարութեամբ, որմէ դուրս գրեթէ այլ գետակ կամ վտակ նշանակուած չենք տեսներ Կիլիկիան աշխարհացոյց քարտէզներու վրայ, ի բաց առեալ փոքր ձորակ մը՝ Թաքլը–Սու, որ քարաժայռերով գոգացեալ ձկնաշատ խորշի մը մէջ ծով կը թափի, անցնելով հովանաւորդ ծառաստաններէ։ Այս ձորակին ակը կը գտնուի ժայռի մը մէջ, որուն հիւսիսային–արեւելեան կողմը կը տեսնուին քառակուսի չէնքի մը կիսաքանդ երկու պատերը, որոնցմէ զատ գաւառիս ծովափեայ շրջանին մէջ կը գտնուին յիշատակութեան արժանի մէկէ աւելի պատմական վանքեր ու մանաւանդ բերդեր։ Վիքտոր Լանկլուա կը կարծէ որ յիշեալ ակնաղբիւրը համբաւաւոր հանճարատուն Նուսն (Νοῦς)ն է։ Ծովեզերքէն փարսախ մը հեռաւորութեամբ դէպի արեւմուտք կը գտնուի Փերշէմպէ գիւղաւանը և կը թուի հիներուն Գեկիլի կոչուած վայրը եղած ըլլալ, Πάχιλη Πέτρα՝, թէև ուրիշներ այլ վայր ցոյց կուտան, Փերշէմպէն նկատելով Calo-Coracesium՝ ուր կը տեսնուին թէև ո՛չ շատ հին՝ բայց այնու հանդերձ մեծ քաղաքի մը և Դ. դարու յատուկ աւերակներ։ Բացի Կոռիկոս բերդաքաղաքէն, ինչպէս տեսանք, համանուն գաւառիս մէջ էին նոյնպէս Պռականա ամուր բերդը, ինչպէս նաև Սեւիլա՝ որոնց մասին առանձինն պիտի խօսինք։ Կոռիկոսի գաւառը կ'արտադրէ առատ արմտիք, բամբակ և արլուռ, մանաւանդ բար եզ և ոչնիւ ձի։ Կլիման բարեխառն է և ունի ամէն տեսակի համեղ և առատ պտուղ։ Գաւառիս մէջ ատենոք կը մշակուէր քրքումը՝ որուն տունկերը ցարդ կ'երեւան հոս ու հոն։ Մօտակայ թիւրքմէնները այս տունկերէն կը քաղէին քրքումը և Սելիֆքէ կը տանէին ծախելու համար։

Բ.— Քաղաքին դիրքը. Երբեմն բազմամարդ և ա՛յնքան ծաղկեալ՝ իսկ ներկայիս աւերակոյտ մը միայն ներկայացնող ու ցանցառ բնակչութեամբ Այսու Նաւահանգիստէն սկսեալ Միջերկրական ծովուն երկարութեամբ ու իր արեւմտեան ուղղութեան վրայ մինչև Ասայիոյ ծոցը, ծովեզերքը կը ոստանայ բնորոշ կիրպարանք մը, իբր Կիլիկեան ծովեզերքի ամէնէն յատկանշական գիծերէն մին՝ որոնք ա՛յնքան ազդած ըլլան բնակչած նկարագրին և ասոնց պատմական նկատագիրներուն վրայ։ Այս ծովախորշը երբեք կտրատուած չէ լայն և խորունկ բացուածքներով, որոնք կարեւոր ապահով և յարմար ապաստարաններ ընծայել նաւերու, ինչպէս բուն ծովեզերքը՝ զոր Բրոքոնտիզի և Եգէական ծովու գաղջ ու կապտորակ ալիքները կը թրջեն։ Եւ երբ նոյն ծովեզերքը, իր երկարութեան վրայ զարդարուած էր ա՛յնքան բազմաթիւ քաղաքներով, բոլորն ալ յունական և որոնց իւրաքանչիւրը հպարտ էր իր յունա–հռոմէական փարթամութեամբն ու բարձր քաղաքակրթութեամբը։ Ինչպէս Փոքր Ասիոյ կամ Անատոլուի ամբողջ հարաւային ծովեզերքը, նմանապէս Սելեւկեան այս ծովախորշը, նպաստաւոր չէ եղած երբեք ծովային յարաբերութեանց զարգացման։ Կիլիկիան կամ հայկական ծովափը կը ներկայացնէ Փոքր Ասիոյ ցամաքակղզիին միւս երկու ծովեզերքներուն՝ Եգէականի և Սեւ ծովու միջին կերպարան-

digitised by A.R.A.R.@

քը։ Առաջին ակնարկով թէև կը կարծուի որ ան յարմար ծովախորշ մըն է ծովահեւնութեան և մօտիկ նաւահանգիստներու հետ յարաբերութեան (cabotage), բայց յայտնի է որ ան չափազանց անատակ է զինուորական կամ առևտրական ընդարձակ նաւակայք մը դառնալու։ Ալէքսանտրէթի ծոցը ցամաքին մէջ թափանցած ըլլալուն չըբջապատուած է լեռնագօտիով մը՝ զոր մագլցիլ կամ դառնալով անցնիլ պէտք է՝ մտնելու համար Փոքր Ասիոյ ներքին գաւառներուն մէջ, ինչ որ մեծ դժուարութիւն է առևտրական ներքին փոխանակութեան համար։ Հողագրական այս պայմանները ցոյց կու տան որ կիլիկեան ծովախորշի այս կէտին վրայ առևտրական ներքին հաղորդակցութիւնները, զոր օրինակ դէպի Հալէպ, փոքր կարաւաններով միայն կը կատարուէին։ Ու եթէ հակառակ այս բնական արգելքին, առևտուրը Միջին դարու ընթացքին անհամեմատ ընդարձակութիւն մը ստացաւ նոյն այս ծովախորշին մէջ, ասիկա կրնար հետեւանքը եղած ըլլալ միայն քաղաքական ա՛յն վիճակին՝ ուր կը գտնուէր այն ատենուան Մերձաւոր Արեւելքը, ինչպէս նաև լատիններու ներկայութեանը Կիպրոսի և Սուրիոյ մէջ։ Մեկարի հրուանդանին (Քարա–Թաշ Պրուն) արեւմտեան կողմը կիլիկեան ծովեզերքը չեղում մը կը գծէ որ կը ձեւացնէ Պոմպէոպոլսոյ ծոցը և որ իր տարածութեամբը նոյնիսկ ու նուազ հակումովը, կը գտնուի հարաւային հովերու ազդեցութեանց և ասոնց յարուցած փոթորկոտ ալիքներու սպառնալիքին դէմ։ Հնութեան մէջ կիլիկիոյ մեծագոյն շուկան եղող Տարսոն եզերուած էր ընդարձակ ու ծանծաղ լճակով մը՝ ուր կը թափէր Կիւդնոս գետը և որ կը բացուէր ծովուն վրայ։ Ասիկա իր նաւահանգիստն էր, հիներու Ռեկման, Անքիալէի արեւելեան կողմը՝ որուն շուրջը կը բարձրանային քաղաքին զինարանները։ Այս աւազանը հակառակ անոր որ տեւականօրէն հողով ու աւազով կը լեցուէր ու յատակն ալ միշտ կը բարձրանար Կիւդնոսի գետաբերանը տեղափոխելու ատոհման, պարզ ակնարկով մը բաւական եղաւ դիտելու որ ան երբեք ի վիճակի չեղաւ նոյնիսկ փոքրիկ նաւատորմ մը պատսպարելու և դառնալու փոքր ի չատէ կարևոր նաւակայք մը։

Ահա այս ծոցին հանդիսակաց կողմն էր որ կը գտնուէր զինուորական առաջնակարգ կարևորութիւն ունեցող Կոռիկոսը, Կալիւկադնոս և Լամոս գետակներուն միջև, իբր նաւակայք շատ փոքր՝ բայց շատ բանուկ նաւահանգիստ մը, ա՛յն շրջանին մանաւանդ՝ երբ ան կը պատկանէր կիլիկեան մեր իշխանութեան և որ կը ծառայէր գլխաւորապէս իբր միակ նաւահանգիստ Կիպրոս անցնելու և իբր առևտրական կայան՝ այդ կղզին ապրանք փոխադրելու եւ փոխադարձաբար։ Մինչև Ալայա հասնող ծովեզերքը եզերուած էր Տաւրոսեան լեռնաշղթայի մասնակի ճիւղաւորումներովը, յաճախ հոս ու հոն կըտրատուած դէպի ծով հակող նեղ և խոր հովիտներով և ուրկէ կը հոսէին անկանոն և թուն ընթացքով գետակներ։ Այս փոքրիկ խորշերը, ինչպէս տեսանք, կը ծառայէին որքան իբր նաւակայք, նոյնքան ալ իբր հաւնեստուն քրիստոնեայ և իսլամ վաճառականներուն։ Այս ամբացեալ նաւահանգիստը ծովի կողմէն պաշտպանուած էր երկու բերդերով, կիսովին բնական ու շինուածոյ, որոնց աւերակները կը մնան ցարդ։ Այս բերդերէն մին կը գտնուէր ցամաքին վրայ, իսկ միւսը՝ ծովեզերքի մօտը գտնուող կղզեակ ժայռի մը վրայ, Աքիա բերդաքաղաքի նմանողութեամբ, վերջինս շատ աւելի փոքր ու աննշան ի հարկէ։

Կոռիկոսի կամ Քուրքօ կղզին ո՛չ մէկ ծովային կամ զինուորական քարտէսի վրայ նշանակուած կը գտնենք, մինչև որ անգղիացի ծովակալ Beaufort ու Kiepert մատնանշեցին զայն։ Ցամաքին ու փոքր ծովախորշին հանդէպ կղզեակին դիրքը այնպէս մըն է որ բացէն անցնող նաւ մը և կամ ծովեզերքէն զէպի բաց ծովը հեռացողը այնպէս կը կարծէ որ ծովային ու ցամաքային բերդերը մէկ են ու կղզեակն ալ շատ փոքր հողի շերտ մը՝ դէպի ծով երկարած։ Բոլոր այն ջրագրագէտները որոնք շատ անգամներ խորաչափած են Գարամանի նախկին էմիրութեան ծովեզերքները, նկատի չեն առած այս կէտը և ծովակալ Պոֆորդ է որ առաջին անգամ ըլլալով լրացուցած է քարտիսագրական այս թերին։ Ու շատ բնական էր որ բազմաթիւ նաւաբեկութիւններ պատահէին այս վտանգաւոր ծովեզերքի մասին տիրող տգիտութենէն։ Նաւեր՝ կարծելով որ կարելի է մտնել կղզեակին

digitised by A.R.A.R.@

եւ ծովեզերքին կազմած նաւահանգիստը հետզհետէ սատկացող փոթորիկի ժամանակ, կուգային խորտակուելու խարսխներուն դէմ՝ որոնք բերդը ամէն կողմէ կը շրջապատէին։

Կոռիկոսէն մէկ քանի ժամ դէպի հիւսիս-արեւելք ծառազարդ ձորակ մը կայ՝ որուն երկայնքէն կ'անցնի ամառը չորցած հեղեղ մը եւ որ ձիւնհալի ժամանակ գետի մը կերպարանքը կ'առնէ, իր լայնութեամբն ու արագ ընթացքովը։ Այս պատճառաւ ալ կոչուած է Տելի Սու՝ որ սակայն չի յիշուիր երբեք ո՛չ մէկ քարտէսի եւ աշխարհագրութեան գիրքի մէջ։ Լանկուա նոյն այս ջուրին ժայռուտ հողամասերէն անցնիլ կը ստիպուի, կածանի մը հետքերուն վրայէն անցնելու համար հովիտ մը՝ որ կը վերջանայ երրորդական շրջանի (miocène) յատուկ կրաքարային երկու հսկայ զանգուածներու հիւսիսակողմը, խարխսէն բաժնուած իսկ գագաթէն ալ միացած սուր անկիւն մը և կամար մը ձեւացնելով։ Մուտքը գոցող ծառերու մէջէն ներս թափանցող արեւի ճառագայթներով տկարօրէն լուսաւորուած խոր և խոնաւ քարայր մը տեսակ մը հրաշագործ քարանձաւ կը ներկայացնէ, ինչպէս որ նախնիք սովոր էին կոչելու և ուր գերբնական յափշտակութենէ մը և մարգարէական զառանցանքէ բռնուած մարդիկ պատգամներ կ'արձակէին։ Այս քարանձաւին մէջ է լճացած ալի ջուր մը, որ մասնաւորաբար ձիւնհալի ժամանակ կը յորդի և կ'արգասաւորէ շրջակայքի անտառի մը տպաւորութիւնը թողող յորդառատ բուսականութիւնը։ Ռուս գիտնական հնախոյզ Զիհարէֆի քարանձաւին երկարութիւնը գտած է 271 մեդր, իսկ բարձրութիւնը՝ 30։

Գ.— Քաղաքին անունը. Պաղոմէոս, Բոմբոնիոս, Մելա և Պլինիոս կը յիշեն այս անուանի նաւակայքը։ Ցոյն և լատին աշխարհագիրներ քաղաքիս անունը Κώρυκος, Corycus կը գրէին. իսկ Միջին դարու պատմագիրներ Կոռիկոսի տուին Curcum, Curtum, Curta, Le Courc, Le Court անունները, կարճ իմաստով, իբր Կիլիկիայէն Կիպրոս անցնելու ամէնէն կարճ ճամբան։ Արաբ պատմագիրներու թարգմանիչներ յաճախ բառս կարդացած են Cirrhus, թերևս այն մտածումով՝ որ արաբ աշխարհագիրներու Cirrhusը նոյնը եղած ըլլար Cyrrhusին, իբր գլխաւոր քաղաքը Հիւսիսային Սուրիոյ Cyrrhestiqueին։ Ցայսմի է որ Կոռիկոս անունը բոլորովին յունական է, ինչ որ կը հաստատէ որ քաղաքը չինուած է Ցունաստանէն հոն հասած գաղութէ մը։ Արդարև Ցունաստանի մէջ այս անունով քաղաք մըն ալ կը գտնուէր, Դեղփիս քաղաքէն քիչ մը հեռու։ Անցեալի պատմութեան մէջ, ինչպէս Ցունաստանի, այնպէս ալ Փոքր Ասիոյ մէջ կը հանդիպինք Կոռիկոս անունով բազմաթիւ վայրերու, զոր օրինակ քաղաքներու, կիրներու ևն.։ Կոռիկոս անունը կը թուի եկած ըլլալ, դատած՝ անունիս արտաքին երևոյթէն, յունարէն «կոռիկոս» բառէն, որ կը նշանակէ կաշիէ պարկ, հովիտ, տեսակ մը նաւ, ժժմակ մը կամ խեցեմորթ, ուռուցիկ ձևով ամէն տեսակ առարկայ՝ որոնք կրնան բաղդատուիլ լեռներու, ժայռերու և անձաւներու անուններուն հետ։ Միջոց մը այնպէս կարծուեցաւ որ Կոռիկոս իր անունը կրնար առած ըլլալ «քրքում = քրքում» բառէն. և արդարև գիտենք որ քաղաքին շրջապատը կ'արտադրէ Կիլիկիոյ ամենաընտիր քրքումը (safran, զաֆրան)։ Եւ սակայն դիտելի է որ «քրքում» բոլորովին տարբեր արմատէ մը յառաջ եկած է։ Կոռիկոս բերդաքաղաքին անունը ամբողջ Միջին դարու ընթացքին փոփոխութեանց ենթարկուեցաւ և իւրաքանչիւր հեղինակ փոխեց այս քաղաքին սկզբնական անունը։ Այսպէս, Խաչակրաց լատին քրոնիկագիրները զայն կը կոչեն, ինչպէս տեսանք, Corycus, Curco, Curc. Ֆրանսացիները և մասնաւորապէս Կիլյոմը Մաշօ զայն կը կոչեն մերթ Le Court, մերթ ալ Le Courc։ Ընդհակառակը արեւելքցիներ ճշգրտօրէն պահած են քաղաքիս սկզբնական ձևը, ինչպէս որ կը տեսնենք ասորերէն մատենագրութեան մէջ՝ Kourikous։ Հայ մատենագրութեան մէջ, սկիզբէն ի վեր, Կոռիկոս անունը մնաց անփոփոխ։

Դ.— Քաղաքին եկեղեցիները. Ցայսմի է որ նախաքրիստոնէական շրջանին իսկ Կոռիկոս եղած է բաւական բանուկ նաւակայք մը, վասն զի դեռ մինչև ցայսօր Նեյբանկլրգ կոչուած ձորեզր բարձունքի մը վրայ կը գտնուի քարայր մը, ներսը կիսաբոլոր, հաւանաբար կոստուն մը՝ որուն շուրջը կը տեսնուին բագիններու յատուկ քանդակներ

digitised by A.R.A.R.@

և մահը խորհրդանշող նշաններ, հաւանաբար հետագային իրը գերեզման կամ ուխտատեղի ծառայող։ Տեղւոյն ուղղաբերձ ժայռերու կոչկոռները բոլորովին դժուարացուցած են ճամբան, բայց դէպի բաղին հանող աստիճաններուն քարակտուրները կ'երեւան ցարդ։ Քարայրներէն մէկուն մուտքէն քիչ մը հեռուն կը տեսնուի ներկայիս մզկիթի վերածուած փոքրիկ եկեղեցի մը, բիւզանդական որմնկարներով՝ ուր կը մտնեն նեղ փողանցքէ կամ երկար խոռոչէ մը և որ հոն բանակող թիւրքմէններուն կենդանեաց իրը փարախ ծառայած է։ Կոռիկոս, ինչպէս տեսանք, բիւզանդական տիրապետութեան ժամանակ Արեւելեան Միջերկրականի ափանց վրայ կարևոր բերդաքաղաք ու առևտրական և զինուորական նաւահանգիստ էր։ Հաւանաբար Զ. դարէն սկսեալ, իրը մետրապոլտական կեդրոն ան ենթարկուած Ճաց Տարսոնի թեմին և իրը այդ ունեցաւ պազիլիքա և բազմաթիւ այլ եկեղեցիներ ու վանքեր, քաղաքին ներսն ու շրջականները, որոնցմէ ոմանց հետքերն ու աւերակները կը մնան դեռ այժմ։ Այսպէս քարադամբաններով եղերուած լայն ճամբուն վերջաւորութեանը վրայ տեսնուող եկեղեցին, զէթ իր աւերակներէն դատելով, կը թուի բաւական մեծ եղած ըլլալ, հաստահիմն կառուցուածքով ու զարդարուած մարմարեայ հաստ սիւներով և գեղեցիկ քանդակներով, իրը Ճացորդները վայելուչ ճարտարապետութեան մը։ Վիգտոր Լանկլուա կը յիշէ որ ցամաքային բերդին մէջ տեսած է երեք մատուռներ։ Ասոնց մեծագոյնին մէջ նշմարած է սրբոց նկարէն պատկերներ և պատերուն, սիւներուն, կամարներուն ինչպէս նաև ձեղունին վրայ կարգեր։ Այսօր իսկ սոյն մատրան խորանն ու մկրտութեան աւազանը որոշակի կ'երեւին։ Միւս երկու մատուռները բոլորովին լեցուած են փլածներով։ Թէ՛ այս և թէ ծովային բերդին եկեղեցիները ծառայած են հայկական պաշտամունքի։

Թրգմ. ԱՐՇԱՒԱԶԴ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

(Շարունակելի՝ 1)

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ(*)

Անկարելի էր որ այս բոլոր թարգմանական գրուածքները ևայլն առանց ազդեցութեան Ճային հայերէնի վրայ։ և մենք տեսնում ենք՝ որ եթէ Ը—Ժ դարերին հայ գրական գործերի մէջ գրեթէ չկան արաբերէն բառեր, ընդհակառակը աւելի ուշ, ԺԱ — ԺԲ դարերում գրուած աշխատութիւնների մէջ՝ նրանց թիւը հասնում է հարիւրների։ Յատկապէս բժշկութեան լեզուն, նրա հետ անբաժան հասկանալով նաև բուսաբանական լեզուն, զուտ արաբերէն էր։ Հայերէն բժշկական գրուածքների մէջ յաճախ ամենահասարակ բառերի տեղ, ինչպէս pnf, զարկերակ ևայլն, գտնում ենք նրանց արաբերէն հոմանիշը։ Բժշկական գեղատոմսերը կազմուած են միշտ արաբերէն բառերով, մօտաւորապէս այնպէս՝ ինչպէս այսօր գրուում են լատիներէն բառերով։ Հայերը թողել են մեզ նոյն իսկ բժշկական բառարաններ՝ արաբերէն, պարսկերէն, յունարէն, լատիներէն և հայերէն լեզուներով։

Մի գաղափար տալու համար այն ժամանակի հայ-արաբական բժշկական լեզուից, ստորև գնում ենք մի գեղատոմս, որ հանուած է Մխիթար բժշկի աշխատութիւնից։

«Հապ այարիճ՝ որ օգտէ գլխոյն և աչացն և ոսկերացն և հանէ զաւելուածքն և զդիճութիւնեն ի գլխոյն և ի յամենայն մարմնոյն։ Առ հինգ աղգ հալիլէ, սապա, ըռեւանդ կարմիր վարդ, զարիկոն, թրպուտ կէս կէս գրամ. շահմ խանզալ, սակամոնի, ասֆիմոն, հնդի աղ, քիթրէ, մուխլազրախ, անիսոն մի մի տանկ, պալասանի փայտ և պտուղ, սասրոն, սալիխայ, մազտաքէ, դարիսէնի, սումպուլ, զաֆրան, օշինդր, հայքար, շիուդքար, լազուարդ քար, սուրինճան, պուզիտան, հապնիլ, կէս կէս

(*) Շարունակութիւն՝ մեծանուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (Ի. Գլուխ)։

digitised by A.R.A.R.@

դանկ. լոսէ զամէնդ մանտը և զսակամոնին խոշոր, և չաղէ սաթառնի ջրով, հապարա» (Մխիթար բժիշկ էջ 144):

Տարակոյս չկայ որ արաբական փոխառութեանց մի մասը՝ յունական փոխառութեանց նման զուտ տառադարձութիւն է և բնաւ չէ մտած հայոց ոչ գրական և ոչ էլ ժողովրդական լեզուի մէջ։ Սրան իբրև ապացոյց է ծառայում այն հանգամանքը, որ նրանց մէջ կան այնպիսի ձևեր, որոնք յառաջացած են արաբերէն բառերի սխալ կետադրութեամբ կամ սխալ ընթերցանութեամբ։ Այսպէս՝

Կլունուս (բոյս ինչ, Վստկ. 109). եւթէ առնուս կլունուս և եփես գինեաւ, օգտէ. այս բառի դէմ յոյն բնագիրն ունի Ֆլոմոս «խանգաս» որ արաբերէն թարգմանութեան մէջ տառադարձուելով գրուել է սոմոլ Ֆլումուս, հայ թարգմանը կարդացել է սխալմամբ ֆլոնոս կլունուս և կամ գուցէ այդպէս է գտել իր գործածած ձեռագրում. երկու դէպքումն էլ կլունուս յառաջանում է ձեռագրի միջոցով և ժողովրդի բերանը բնաւ չէ մտած։

Ճաւարս (մի տեսակ խաղող, Վստկ. 47). յոյն բնագիրն ունի խլորու որ արաբ թարգմանութեան մէջ տառադարձուել է خلورس խլորոս. հայ թարգմանը գտել կամ կարդացել է جاورس ջաւարս, որով կազմել է հայերէն ճաւարս ձևը։ Այսպիսի բառ բնաւ գոյութիւն չէ ունեցած ոչ արաբերէնի և ոչ էլ բնականաբար հայերէնի մէջ։

Փուրփուզնայ (մի տեսակ խաղող). Ազգ մի սպիտակ խաղող կայ, որում հոռոմն ստինաս ասէ և այլ կայ որում փուփուզնա ասեն (Վստ. 47). այս բառի դէմ յոյն բնագիրն ըստ Ալիշանի, Հայբուսակ 3092 ունի կորկինթական։ Արաբերէն թարգմանութեան մէջ բառը տառադարձուելով եղել է قرقنتيه կորկինթիա, կէտերը մասամբ ջնջուելով հայ թարգմանիչը գտել կամ կարդացել է فرقسنه Ֆուրֆուսնա, որով և կազմել է հայերէն փուրփուզնայ անգոյ ձևը։

Բարբիւզակ (ծմել, blitum Գաղիան). արաբերէն بزر جرجير յարբուզ կամ بزر جرجير ջարբուզ բառն է, որի նախատառը սխալ կարդացուելով եղել է بزر بربرز բարբուզ և դրանից էլ յառաջացել է վերի բարբիւզակ ձևը։

Կարելի է յիշել դեռ մի քանի օրինակներ էլ, բայց այսքանն էլ բաւական է ցոյց տալու համար թէ արաբական փոխառութիւնների մի մասը՝ միայն ուսումնական ճամբով է յառաջացած և ժողովրդական լեզուի մէջ բնաւ չէ մտած։ Մենացեալների համար, ինչպէս վերևում ասացինք, չուսենալով ժողովրդական գրուածքներ, չենք կարող ասել թէ ինչ չափով ժողովրդական բառեր են, ո՛ր ժամանակից են մտած հայերէնի մէջ, ո՛ր տեղով և ո՛ր լեզուից։ Անուրանալի է որ նրանցից շատ քչերն են միայն Է. կամ Ը. դարից, մի մասը մտած է Ասորիքի արաբերի միջոցով Կիլիկեան հայերէնի մէջ, իսկ աւելի մեծ մասը Պարսկաստանի ու պարսիկների միջոցով արեւելեան հայերէնի մէջ։ Արաբերէնը այդ ժամանակ, ինչպէս և հիմա ամբողջ մահմեդական արևելքի կուլտուրական լեզուն էր. բոլոր մեր շրջակայ ժողովուրդները (պարսիկ, թուրք, քուրդ, թաթար, աֆղան եւ այլն) բազմաթիւ փոխառութիւններ էին կնքել արաբերէնից և այդ փոխառութիւնները այնպէս էին խառնուել բնիկ տարրերի հետ, որ անկարելի էր որոշել թէ ո՛րն է արաբականը և ո՛րն է օտարը։ Կարող ենք ասել թէ արեւելքում կազմուած էր որոշ միջազգային բառարան. և ահա այդ բառարանը անցաւ նաև հայերին, եթէ ոչ ամբողջութեամբ, գոնէ մեծ մասամբ։ Այսօր էլ Նոր Նախիջեւանի կամ աւելի հեռու Սուչաւայի հայերը, որոնք արաբների երեսը բնաւ չեն տեսած, ունին իրենց բարբառում զանազան արաբական բառեր, որոնք բղխում են նոյն միջազգային բառարանից։ Օրինակ Ննխ. մախսում (անմեղ մանուկ) — արաբ. մասում, սահաթ (ժամ) — արաբ. սաաթ, Սչ. խրսմբրօւ ու դոլվբրօւ (բախտաւորութեամբ և հարստութեամբ) — արաբ. կսմաթ ու դուլաթ եւն.։ Եւ որովհետև այն ժամանակի արեւելքում ամենից կուլտուրական և հայոց հետ ամենից աւելի շփման մէջ եղող երկիրը Պարսկաստանն էր, որ և նոյն միջազգային բառարանի գլխաւոր հեղինակն ու տարածիչն էր, ուստի մենք էլ յաջորդ ցանկի մէջ միասին հաւաքում ենք այն բոլոր փոխառութիւնները, որ կնքել է հայերէնը արաբերէնից ուղղակի կամ անուղղակի և յետին չրջանի պարսկերէնից։ Դրանցից, ստորագծեալները արաբերէն են, միւսները պարսկերէն։ Այս կարգի պարսկերէն բառերը

digitised by A.R.A.R.@

պէտք չէ շփոթել այն հին իրանական փոխառութեանց հետ, որ յիշել ենք վերը գլուխ Թ. (Տե՛ս Սիոն 1941, էջ 303, և հ.) և որոնք պարսկերէն լինելուց աւելի պահլաւերէն են, ըստ որում ներկայացնում են ոչ թէ արդի պարսկերէնի, այլ պահլաւական ձևերը. հմմտ. նիզակ — պհլ. նիզակ — պրս. նիզա. դրանք փոխառեալ են հայերէնի մէջ հնագոյն ժամանակներից սկսած մինչև մահմեդական շրջանը, իսկ միւսները մահմեդական շրջանից յետոյ։

Ցանկը ունի 801 բառ, որոնցից 498 զուտ արաբերէն են, իսկ 303 նոր պարսկերէն։

1. Բնութեան և նրա զորութեանց մասին.

Զանաչ, զոնալ, զոնրայ, թուրայա, ղամար, մառեխ, մուշքարի, տամս, սարատան, տապրան, փիլաֆ, օտարիս:

2. Կրօնական բառեր.

Կշռն, Նախաքաղաքական, պէնէք եւայլն — *ալք, գոռ, դանիշման, զեմիադար, գեհիա, զեհեռ, թափուռ, կուռայ, *կուրան, հեռ, *հուրի, ղադի, նեմիայ, մալում, *մանեսեի, մամբար, մեհրապ, *մզկիթ, մլեռ, մնեռ, մնիրայ, մոլնայ, մուղրի, մսլիմանակ, նամլաթ, Ռասուլ, ռամ, ռոհուն, սունաթ, տաղակ, տլիամ, փուրկան:

3. Մարդ, մարդու եւ անասնի մարմնի մասեր.

Բասար (խելք), *խալ, *խպիպ, *կոտոռ, *նիս, սափրայ:

4. Հիւանդութիւններ եւ նեմաններ, բժշկական բառեր.

Աթաշակ, արական, բիմար, բոլոճ, բուրեանա, *գիժ, գոսակ, դարդ, զահր, թուխմայ, լուք, խարազայ, խուլինջ, *կուզ, հասպա, հաստարիօն, հու, հուլապ, մաղեուն, մլեամ, նազլայ, նասուր, նեկրիս, *նապայ, նուսխայ, *տառեխ, տարաբ, շուշտանդամ, պալղամ, պահրէզ կամ փահրիզ, տիմես, տլէ, ռամաֆ, քաջալ։

5. Կենդանիներ.

Ագուզնայ, *բլբուլ, դաւաբ, դուռեն, զամբուռ, ղուրափայ, թիմսահ, *թութակ, իկոիչ, իշարմուզ, խալիզոն, խնտուզ, կուռաբ, մալ, մարֆաբ, մեմուն, *շիշակ, պաֆարայ, ջնիբայ, ռահվար, սնդուր, փանլ:

6. Ընտանիք եւ ընկերութիւն.

*Ազապ, մալազ, փրզանգ։

7. Երկրագործական.

ա) Բոյսեր — այալուսան, ազատդրախտ, ազարիոն, աթխար, ալաժանրի, ալասնի, ալպուն, ալսուս, ախախիա, ախինոս, ախրոն, ախլիմիա, ախլասջ, ախնուսան, ախրուն, ակիր, ակիրանա, անաս, ամլան, ամպան, ամրուսիա՝ անոդարա, անճարա, անճաբակ, անճիտան, անճիրիտամ, անճուպար, ապրանճ, ապրուր, առասն, ասխիս, ասմանջուն, ասպաղոլ, ասպանտ, ասպաստ, ասպարնմ, ասպուր, ասպուրակ, ասսախոտս, ատմաս, արտնդուպարանդ, արամ, արիս, արճուան, արմինան, արսանիսա, աւթիմոն, ափարբիոն, *ափիոն, աֆիլիմելիֆ, բադիան, *բալ, *բալասան, բալուտ, *բակլայ, բանման, բաղամ, բան, բանդ, բաչխ, բատաւարդ, բարբիզակ, բեհաշտի, բզրուկ, բզրկատուն, բեխարբար, բէշ, բիլան, բրնջաս, բդում, *գազար, գզմազ, գուլիսապան, գուլմարդ, գագէ, գաբունաջ, գարիսվար, գարշիան, գիթլա, *եղրիւանի, երպատուր, զանթեր, զանրայ, զանանապիլ, զառնաբ, զարեն, զարիր, զարու, զարուր, զարրիրնդրախտ, զափրան, զինջարակ, զուռուայ, զրեանդ, զրիչք, զրմբատ, բուազիան, թաթրա, թաղանդատ, թանդին, *թարխուն, թմբուլ, թմրենցի, թուրիա, թուտարի, *թուրինջ, թուրչա, թրմուզ, թրպուտ, ժիժք, ժիրակ, իշխուն, լալա, լախլախայ, լապլապ, լապսան, լեղինջ, *լոբիա, լուպնի, լուծ, լուծան, խաղանջ, խալոկ, խամալոն, *խաշխաշ, խար, խառթութ, խառնուպ, խարաք, խարբախ, խարզանրա, խարխիար, խարտալ, խափիթ, խեղպուտ, խիար, խիարշամբար, խիր, խիլալ, խլեփ, *խոզակ, խորփրբատ, խուզանի, խուպազ, խուռամ, խոլնջան, կալի, կակուլա, կանդանայ, կաճնմար, կասբ, կիլկիլ, կլունուս, *կղմուխ, կնբիլ, *կոկան, կոսս, կոռոբ, կրտիմ, կրտմանե, կրփե, կոդայ, հազազ, հազարդարուն, հազարճաչան, հալիա, հալտիպ, հալծա, հան, համանիմ, համամա, համիշարահար, համկնա, հանդալ, հանդաղուղ, հաբա, հաբիշ, *հապալաս, հապլխոր, հապլմիս, հապլմլուկ, հապտինի, հապլպան, հասակ, հավր, հաստաղ, հարան, հարբ, հարմալ, հաւաֆ, *հիլ, հիլիոն, *հինայ, հնդիպկ, հնդկոկ, հոռոսմարի, հուլաբ, հուլպա, հումայզ, հուսան, ղալիոն, ղամպիլ, ղալսուն, ղաստափ, ղար, ղարասկ, ղարաա, ղարիկոն, ղափեթ, ղուլղաս, ղուլպ, ղրծա,

digitised by A.R.A.R.@

ճալղուզայ, ճանակ, ճատ, ճատվար, ճարճիր, ճաւարս, ճնդիաճ, ճուիճաճ, ճուլպան, ճուսճուս, ճոզպէ, ճոճիր, *մահանակ*, մանլապ, մաղապ, մանիքա, մամիրա, մայս, մարաճ, մարար, *մարգանգոշ*, *մարխ, *մարմարխուլ, *մեխակ, *մեհրիկ*, մնքին, մնքուր, մեմիռ, մու, մուլուխ, մուխալլաա, մոզ, *յամպար, յատպէ, յարար, *յուճապ, նազիրս, նամամ, *Նանախու*, նապխ, *նարինջ, նարնիս, *նարմուշկ*, *նարտան*, *Նիլ*, *Նիշուղ*, *Ննի*, *Ննուիկ*, *Ննունուիքար*, նՅլ, ոակակուլ, ոանապ, *չանիքաուակ*, ոանմիանգալ, *չանպալուտ*, *չանպանակ*, *չանպրակ*, *ոամամ, *չանկիաբ*, ոապան, ոաւիարաճ, ոեն, *չերիսիշտ*, ոերմ, *չաբալուիթ*, ոնճարմի, *չոմին*, ոուիաճի, *չուքուիքայ*, ոպրամ, *չբէշ, *չամակ*, *չում*, *չուքաքաղ*, *չքնոտուր*, պազրպանճ, պալատուր, պանմի, պատքուտա, պապլաս, պապուճաճ, պառաուտուճաճ, պատպաս, պասպայիճ, պատեխ, *պաթինճաճ, պատրինջ, պատրուճ, պարզաս, պարկուկ, պարսինա, պիլիսկի, պուլ, պուտար, *պուտինա*, պրինկ, պրուխ, *ռահան*, ռատպայ, *ռավանդիսենի*, *ռիպազ*, ռուզ, սադիր, սալաթ, սալիխա, սաղապ, սաճ, սամուխ, սանամբրի, սանտալ, սապր, սասալիոս, սատախինիս, սատապ, սանեճ, սարախ, սարղանդ, սարմախ, *սիսամբար*, սիսպար, *սմբուլ*, սնոպար, սոնոպրի, սարնջաճ, սուս, սուրաղատսանաճ, *սպանախ*, *սպարակ*, *սպտան*, վանիլիծակ, վան, *վասմա*, վարս, տալիճ, տալխ, *տահմուշտ*, տանր, տանգ, տապար, *տատանպուլայ*, *սարասիս*, տարղոճ, *տիվտար*, *տուխն*, տուղաս, տուղու, փարասիոճ, փափղեմն, փեննա, փու, փուրփուզնայ, փուփլի, *փրփրիմ*, ֆամունի, *քաշմ*, ֆապապա, ֆարաւէ, ֆաֆանաջ, *քնար*, ֆուր, *քոռի*, *ֆուճնայ, ֆուտ, ֆուռաբ, ֆուրմ, օնամա, *օշնա*, ֆուտարայ:

բ) Այլ — *չեչ, *սարբինայ*, *բաղչայ*, *բոստան*, *պահէզ*։

8. Խաշնարածութիւն եւ գիւղատնտեսութիւն.

Ձիս — *թանգ*, *լկամ*, նալ, *սախտել*, սբար, *փալան*, *քնփուշ*։

9. Գիտութիւն եւ արուեստ.

ա) Աբեհոգէ Էլբրբէրեալ — ալիմիա, *գաստաքար*, *դինգ*, *գոխն*, *լպուս*, խապաղ, *խարուանդայ*, կալափեել, *կաւաս*, հաքամ, հատաս, *մուսեեիկ*, մմար, *պայտար*, *Ջուլհակ*, սերեծիկ, *փալանտուզ*, *ֆիմիա։

բ) Ռոսամ և Էբալանոնիան — թախրբդ։ կափայ, ղալամ. տաբար։

գ) Նէբէլոնիան — *չկայ*։

դ) Նբաքլոնիան — բարբուս, *գոս*, *դամ*, *դաշտ*, ղանոն, մտրուզ, նաղարայ, *նաֆիբ*, *սազ*, սափարայ։

ե) Խուէբ և Էրանէ — *ռնպարար*, *մազատ*, մաղլաղ, մասխարայ, *նարտ*, ատարինջ, *քուշտագիլ*։

10. Գոյներ.

*ֆումայք։

11. Վանառականութիւն եւ դրամական գործարք.

*ապրայ, *կապալ, դաւիլ, մազաս, մալ, ջամ, ջուլմայ, ռեմոն։

12. Շինութիւն եւ շինի մասեր.

աթուլի, բաբ, բուրջ, գիկ, թալուքայ, կանդարայ, կուպպայ, *նղմունք*, մղլակ, *չափար*, պրեհ, *սայլան*, *սարուփարթայ*, փնտուկ։

13. Հագուստ եւ զարդ.

ապուկալին, *բալաֆուշ*, *դաստառչայ*, դուռայ, զուլնար, բաճ, *թեռ*, *լաթ*, *լաչակ*, լեհեթ, *խալխալ*, *կազ*, *կապայ*, կոռտիկ, կուպպայ, մավիճ, *շարփուշ*, *շմաթ*, *շուպ*, *չմուշկ*, *չուխայ*, *պիչայ*, *ռիսդէ*, *սարազուճ*, *տուֆ*, *փարտայ*, *քթան։

14. Ուտելիք եւ խմելիք.

գուլբայշաքար, *դդման*, *թարխանա*, *լեզանգ*, *լոշ*, *խաւիծ*, *կուլապ*, հավարի, մունճախդեն, *մուսատ*, *նեշայ*, *նշատակ*, *չիրիկ*, *ռուպ*, *տապրիզատակ*, տիրս, *փենիտ*, *քուֆտայ*։

15. Առնին ենտարութիւն, կարասիք.

*ակիշ, բուբակ, *դաստապրիկ*, *դաստիշոն*, *դուրճ*, *թաղար*, *թոս, *թաշտ*, *թափուր*, *թուայ*, *խսիր*, *կամ* հասիր, կառուն, *կողպեֆ, *հեմիան*, *ճարայ*, մկսար, *մկրաս, *չամչաշերեպ*, *պատիա*, *ջովլի*, սալա, սատուր, սադր, *սինի*, *սնդուկ*, *քափչայ*, *քոր։

16. Թիւ, չափ, կշիռ եւ դրամ.

ատիլ, *դաստա*, *դահագրամ*, *թասու*, *թուխթ*, խանսար, *հաշտագրամ*, *հաւթագրամ*, մքիալ, ռուզ, ռօրլ, *տատակ*, *տրցակ*, *քիլակ։

17. Մեսաղներ, հանիպին նիւթեր, խեժ եւ նմաններ.

աշմ, ասրուենն, *աւտակ*, *բարկմատ*, *բուստ*, *գաճ*, դենուանդուանար, հատմ,

digitised by A.R.A.R.@

*թանագ, թութի, *լազուարթ, *լալ, լուք, *խալիայ, խիմուլակաւ, *կլայեկ, կերտան կամ զաբրան, հիթիս, մանակ, մահմուտայ, մարդասանկ, մարդարիշար, մուկլ, մուզրհ, նադրուն, *ոիպ, պատժախ, ջիդմար, ջոնար, ռասիՀեն, ռոշնայ, *սուսափ, սիրիգոն, սիրիխիշտ, տիպխ, քարուպայ, ֆիպրիք:*

18. Ճամբի վերաբերեալ. չկայ։

19. Ժամանակ եւ տեղ.

**շուտ, (փեսրուար)։*

20. Երկիր եւ պետութիւն.

ա) Եբլբ մաբբ — դարբանդ, բիլ, կլայ, մայսան, մինա, սեհլ:

բ) Պեռպան կամ պաշտոնեութիւն — ամիրալմումնիք, ամիր, *գզիր, ըռքեպդար, թարխան, խալիֆայ, հեջուբ, ճաշկիր, *մեիլիք, միճապան, մուխթասիպ, չանայ, ջիհանգիր, ռայիս, սամսար, *սուլթան, փաթշահ, փայիկ, ֆառաբ:

գ) Վարչական ֆորմաթ և դիւանական իրաւունքներ — մահր, մանշուր:

դ) Հարկեր — ապուր, խարաճ, հազր, մալ, պաջ։

ե) Պարբերաշրջան — ալամ (գրօշ), ալափ, բահադուր, եասիր, զամմել, *թալեան, խանդակ, խուխայ, խսար, համլայ, հարամի, ղազա, հուսդիկ, մեհեհ, չարխաւոր, ջանդար, ռայ, սրահանգ, քմին։

զ) Զեներ — բալաթիկին, դմիշկ, խալաչուրի, ճաւշանիրու, հոճան, չիմչիր, սլեհ, փիլիկոն, քէշ։

21. Սովորական կեանքի բառեր.

ալանի *(յայտնի)*, արայիշ, բէչարայ, բէշմար, բէուսէտ, բէսիֆաթ, բեդար, բեվաֆայ, բուխտան, գանգալ *(կատակ)*, դաստուրութիւն, *դիրտ, դրուստ, զլիլ, էնտամ, ըռզակ, թազել, թաժայ, քամամ, թամաշայ, թեսգիր, լալապ, խալապայ, խալաս, խալաս, խալուտաթ, խապար, *խիկար, խիամ, խչկիլ, *խումար, *կոլոռ, շառ, չիւան, չախել, ջուապ, ռափիկ, ռեամ, ռիսնտ, *սաղիլ, *տաղել, *տնազ, տուրկան, փարս, *քիչ, քունջ, քուշատ։

22. Մակբայ եւ նմանաներ.

**ափսոս, բարէ (գոնէ), զիրայ, զէր ու զապար, զինահար, թէզ։*

Թէև ցանկը բաւական ստուար է, բայց այնու ամենայնիւ ամբողջական չէ. որովհետև մեծ մասամբ հրատարակուած չեն դեռ այն գրութիւնները (միջնադարեան տաղեր, բժշկարաններ, խստարական գրքուածքներ, պաշտօնական կամ դիւանական գրութիւններ եւն.), որոնցմով հարուստ է այն ժամանակուայ հայ գրականութիւնը։ Զունինք մի այնպիսի բառարան ուր այդ բոլոր բառերը հաւաքած ու ամփոփած լինի. եղածներն էլ կրում են պատահական բնոյթ, որովհետև այդ բոլոր բառերը համարեա մեզանում խորթ ու անհարազատ տարրեր, գրական լեզուից խպառ մերժելի եւ արժանի միայն ռամկական լեզուի մէջ գործածուելու։ Սրանով մենք յայտնած ենք լինում արդէն թէ արաբական փոխառութիւնները ինչ ընդունելութիւն գտան հայերէնի մէջ՝ եթէ ոչ անցեալում, գոնէ այժմ և ապագայում։ Նրանք իրենց գոյութիւնից մեծագոյն մասամբ գրկուելով՝ մոռացութեան մատնուեցին. մի մասը եթէ շարունակում է իր գոյութիւնը ռամիկ կամ ժողովրդական լեզուի մէջ՝ հայութեան գրեթէ բոլոր գաղութներում, այդ բանը միմիայն պարսկերէնի, թուրքերէնի, թաթարերէնի և տաճկերէնի միջոցով է, որոնք ունենալով բազմաթիւ արաբական փոխառութիւններ, պատճառ են դառնում նոյն բառերը հաստատուն պահելու դեռ հայ բարբառների մէջ։ Գալով գրական հայերէնին, նա չափազանց անողորմ է այդ կարգի փոխառութեանց վերաբերմամբ, որոնցից 108 հատ միայն ընդունել է իր մէջ, կէսը զուտ արաբերէն, կէսը նոր պարսկերէն։ Այս բառերը նշանակուած են մեր ցանկում աստղանիշով և չատերը մեր արդի լեզուի անհրաժեշտ տարրերն են կազմում. ինչպէս՝ բալ, բակլայ, թուքակ, ֆիչ, մզկիթ, կաւաս, խալ, պաՀինեան եայլն։

Բացի հասարակ անուններից, հայերէնը արաբերէնից ու նոր պարսկերէնից փոխ է առել նաև անձնական յատուկ անուններ. ինչպէս Սաֆար, Ջիհանգիր, Խուրշուդ, Ջումշուդ, Աբաս, Ապլզարիպ, Աբուղամր, Հասան, Համամ, Դավլաթ եայլն։ Ազգային ու կրօնական տեսակէտով այս կէտը զարմանալի պիտի լինէր, եթէ սակայն չենք տեսնի որ փոխառեալ անձնական անունները ըստ իմաստի անմեղ ու սովորական բառեր են, ածականներ, պատկերաւոր բացատրութիւններ, այն ժամանակները յայտնի եղած նշանաւոր մարդկանց անունները

digitised by A.R.A.R.@

և երբեք չկայ նրանց մէջ մէկը՝ որ յիշեցնէ մահմեդական կրօնը, ինչպէս Մուհամեդ, Ալի և այլն։

Մենք մինչև այժմ չխօսեցինք Հայաստանից դուրս գտնուած հայութեան մասին, թէ ինչ ազդեցութիւն են կրել նրանք արաբերէնից։ Այստեղ կայ երեք խաւ. հնագոյն խաւը Եգիպտոսի, Ասորիքի և Միջագետքի այն հին գաղութներն են՝ որ արաբական ահագին մեծամասնութեան մէջ կուլ գնալով՝ ձուլուել անհետացել են։ Երկրորդ խաւը կազմում են այն գաղութները, որոնք թէեւ դեռ կրօն եւ ազգութիւն պահել են, բայց լեզուն կորցնելով ամբողջովին արաբախօս են դարձել. այսպէս են Հալէպի, Դամասկոսի, Պէյրութի, Մերդինի, Մուսուլի, Բերքուքի գաղութները, որոնց վրայ պէտք է աւելացնել նաև Սղերդը, որ թէև Հայաստանի մէջ է, բայց իբրև ծայրագաւառ, շրջակայ քուրդ ու արաբ մեծամասնութեանց ազդեցութեամբ կորցնելով հայերէն լեզուն, քրդախօս ու արաբախօս է դարձել։ Երրորդ խաւը կազմում են Ասորիքի հիւսիսային արեւմտեան անկիւնը գտնուած հայ գաղութները (Զոր-Մարզուան, Անտիոքի գիւղերը, Սուեիդա և յատկապէս Ջիսրի-Շուղուրի՝ հայերը, ինչպէս նաև Բաղդադի և Բասրայի հայերը), որոնք խօսում են հայերէն բարբառներ, բայց մեծապէս ազդուած արաբերէնից. հմմտ. Աճառեան, Հայ Բարբառագիտութիւն, էջ 213–214, գրուած հատուածները։ Այս երեքից դուրս իբրև չորրորդ խաւ պէտք է յիշել. Ասորիքի նոյն չրջանը ապաստանած 120,000 կիլիկեցի հայ ժողովուրդը, որ թէև հայախօս և ապրում է ֆրանսիական հպատակութեան տակ, բայց չրջապատի արաբախօս մեծամասնութեան ազդեցութեան տակ ուշ թէ չուտ պիտի կրի արաբերէն լեզուի կնիքը և մտնի նախորդ երրորդ խաւի շարքը։

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

16 ՅՈՒՆԻՍԻ 1945 Թ Ի Ա. ԷՋՄԻԱԾԻՆ

ՆԻՍՏ Բ

1945 թ. Յունիսի 18-ին, ժամը 11 և 30 րոպէին, Հոգևոր Ճեմարանի մեծ դահլիճում, կայացաւ Ազգային-Եկեղեցական ժողովի երկրորդ նիստը նախագահութեամբ Նորին Սրբութիւն Կիլիկիայի Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա.-ի, ատենապետութեամբ ակադեմիկոս Աւետիք Իսահակեանի։ Ժողովին մասնակցում էին 105 պատգամաւոր։

Նորին Վեհափառութեան պատշաճ աղօթքից յետոյ ատենապետը՝ ժողովը բացուած յայտարարելով՝ կարդաց ՍՍՌՄ ժողկոմսովետի նախագահ ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ ուղղուած հեռագրի տեկստը.

ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ

ՄԱՐՇԱԼ ՍՏԱԼԻՆԻՆ

«Այսօր մենք, Սովետական Միութեան և արտասահմանեան երկրների հաւատացեալ հայութեան ներկայացուցիչներս, հաւաքուելով Սուրբ Էջմիածնի դարաւոր կամարների տակ, անցնում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան և եկեղեցական մի շարք հարցերի լուծման մեր աշխատանքին։

«Մենք լաւ ենք հասկանում, որ առանց Ձեր բարեհաճ վերաբերմունքի, Հայ եկեղեցու համար պատմական առաջնակարգ նշանակութիւն ունեցող այս իրագործու-

digitised by A.R.A.R.@

թիւնները կլինեին անիրականալի։ Այս օրերը ամենաերջանիկ օրեր են հայ ժողովրդի դարաւոր պատմութեան մէջ, երբ մեծ Միութիւնը, որի իրաւահաւասար անդամներից մէկն է Սովետական Հայաստանը, այս համաշխարհային աւերիչ պատերազմից չտեսնուած յաղթանակով դուրս եկաւ Ձեր հանճարեղ ղեկավարութեան շնորհիւ, ՍՍՌՄ ժողովուրդների, մասնաւորապէս ռուս մեծ և վեհանձն ժողովրդի հերոսական ջանքերի շնորհիւ։ Եւ առաջին զգացմունքը, որ տոգորում է մեզ, Սովետական Միութեան և արտասահմանի հայութեան պատգամաւորներին, դա երախտագիտութեան և շնորհակալութեան զգացմունք է դէպի Ձեզ, հայ ժողովրդի մեծագոյն բարեկամիդ։

«Ձեր շնորհիւ իրականացուած է հայ ժողովրդի ազատագրութիւնը ու հայկական պետականութեան վերածնումը, և մենք հաստատ հաւատացած ենք, որ Ձեր օժանդակութեամբ կ'իրականանան ճնշման ու հալածանքների հետեւանքով տարագիր դարձած արտասահմանեան հայերի իղձերը և նրանք կը վերադառնան իրենց Հայրենիքը՝ Սովետական Հայաստան»։

Հայ Եկեղեցական ժողովի յանձնարարութեամբ

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Հեռագրի տեկստը լսուեց յոտնկայս և ընդունուեց երկարատև ու բուռն ծափահարութիւններով։

Այնուհետև Ամենապատիւ Տ. Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոսը ընդարձակ զեկուցում կարդաց 1941 թ. Ապրիլի 10ից ցայսօր Մայր Աթոռի գործունէութեան մասին։

Զեկուցումից յետոյ Վեհափառ Նախագահը խօսք առնելով բարձր գնահատեց Տէր Տեղակալի աչալուրջ և արդիւնաւէտ գործունէութիւնը, նշելով դժուարին պայմաններում ոչ ոք չէր կարող գլուխ բերել այն մեծ գործը և ունենալ այն մեծ յաջողութիւնները, որոնց միայնակ ուժերով կարողացել է հասնել Ամենապատիւ Տ. Տեղակալը։ Ժողովը միաձայն հաւանութիւն տուեց և գոհունակութիւն յայտնեց Ամենապատիւ Տ. Տեղակալին իր խոհուն, զգոյշ և իմաստուն գործունէութեան համար։

Ապա ատենապետը կարդաց ՍՍՌՄ Ժողկոմսովետի Նախագահ և հանճարեղ Առաջնորդ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ նորին Ամենապատուութեան Տ. Տեղակալի մատուցած գրութիւն-գիմումը հայ առաքելական եկեղեցու անհրաժեշտ կարիքների մասին. գրութիւն-գիմումի վրայ Մեծ ՍՏԱԼԻՆԸ մակագրել էր իր բարձրագոյն հաճութիւնը և ստորագրել։ Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսի առաջարկութեամբ պատգամաւորական ժողովը ի պատիւ Մեծ ՍՏԱԼԻՆԻ յոտնկայս և խանդավառ ծափահարութիւններով արտայայտեց իր երախտագիտութիւնը և մեծագոյն յարգանքը։

Այնուհետև Ազգային-Եկեղեցական ժողովը զբաղուեց Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման կանոնագրութեան քննարկմամբ։ Բարձրապատիւ Տ. Ռուբէն Ծ. Վրդ. Դրամբեանը կարդաց վերոյիշեալ կանոնագրութեան տեկստը յօդուած առ յօդուած, որն ընդունուեց որոշ փոփոխութիւններով։

Քառորդ ժամ դադարից յետոյ ժողովը վերսկսվեց։ Ատենապետ ակադեմիկոս Աւետիք Իսահակեանը առաջարկեց շնորհակալութիւն և երախտիք յայտնել Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարութեանը, որպիսի առաջարկն ընդունուեց յոտնկայս, բուռն ծափահարութեամբ։

Ամենապատիւ Տ. Տեղակալը յայտնեց, որ ժողովի պատգամաւոր ակադեմիկոս Ստեփան Մալխասեանը մի գրութեամբ առաջարկ է արել յատուկ ազգային տօն կատարել Հայրապետական Աթոռի Կիլիկիայից Սիս Էջմիածին փոխադրուելու հինգհարիւրամեակի առթիւ։ Ազգային ժողովի Նախագահ Կիլիկիայի Վեհափառ Կաթողիկոսը պատմական համառօտ տեղեկութիւն տուեց Հայրապետական Աթոռի 1441 թ. Սսից Սիս Էջմիածին տեղափոխուելու մասին և առաջարկեց, որ ինչպէս համազգային տօն է ճանաչուել ու տօնուել հայկական տառերի գիւտը, Աստուածաշնչի թարգմանութիւնը, նոյնպիսի համաժողովրդական տօն ճանաչուի և տօնուի Հայրապետական Աթոռի տեղափոխութեան 500-ամեակը։

digitised by A.R.A.R.@

Ժողովը որոշեց այս խնդրի առթիւ յանձնարարել Նախագահութեանը յատուկ բաղնաձև մշակել և ներկայացնել յաջորդ նիստին համապատասխան որոշում կայացնելու համար։

Ատենապետը ժամը 2 և 10 րոպէին յայտարարեց նիստը փակուած։

Ազգային-Եկեղեցական Ժողովի Նախագահ՝

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա.

Ատենապետներ՝
Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ
Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆ
Հ. ՁԱԳԸՐ

Քարտուղարութիւն՝
Տ. ԳՐԻԳՈՐ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ
ՍԱՀԱԿ ԱՒ. ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆ
ՎԱՀԱՆ ԱՒ. ՔԱՀ. ԹԱՎԱՐԻԼԿԵԱՆ
Ա. ԵԱՋՃԵԱՆ

ՆԻՍՏ Գ

19 Յունիսի 1945 թ.

Ժողովը բացուեց ժամը 11 և 20 րոպէին Տանն Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսի նախագահութեամբ և բացման աղօթքով։ Ատենապետ ակադեմիկոս Աւետիք Իսահակեան։

Ամենապատիւ Տեղակալ Սրբազանը յայտարարեց, որ Ամերիկայի Արեւելեան թեմի պատգամաւոր Տիար Հայկ Փաւուքճեանը Նախագահութեան որոշմամբ նոյնպէս ընդունուած է ատենապետութեան կազմի մէջ։

Տ. Ռուբէն Ծ. Վարդապետը կարդաց Ազգային-Եկեղեցական Ժողովի բացման առաջին նիստի արձանագրութիւնը, որը ժողովը հաստատեց միաձայն։ Տ. Սահակ Ա. Քհնյ. Սահակեանը կարդաց Բ նիստի արձանագրութիւնը, որը նոյնպէս միաձայն ընդունուեց։

Ատենապետ Աւետիք Իսահակեանը կարդաց հետեւեալ հեռագրի տեկստը՝ ուղղուած Սովետական Հայաստանի Գերագոյն Սովետի Նախագահութեան Նախագահ Մացակ Պապեանին։

«Այսօր Ս. Էջմիածնում Ազգային-Եկեղեցական ժողովի համար Սովետական Միութիւնից և Սփիւռքից հաւաքուած պատգամաւորներս ուրախ ենք յայտնելու մեր ջերմ և սրտագին շնորհակալութիւնները Սովետական Հայաստանի Գերագոյն Սովետի Նախագահութեան Նախագահիդ՝ Մացակ Պետրոսի Պապեանիդ, որ ընձեռեցիք մեզ բոլոր դիւրութիւնները, որպէսզի մենք կարողանանք այսօր Հայաստանում գումարել այս պատմական ժողովը։ Նաև խորապէս շնորհակալ ենք, որ մեզ հնարաւորութիւն տուիք, մեր խղճի թելադրութեան համաձայն, ընտրելու Ամենայն Հայոց Կաթողիկոս և ազատօրէն լուծելու Հայոց Եկեղեցուն վերաբերող կարևոր խնդիրները»։

Ժողովը բուռն ծափահարութեամբ ընդունեց հեռագրի տեկստը։

Օրակարգի յաջորդ հարցն էր Հայ Եկեղեցու Սահմանադրութեան քննութիւնը, որն Ամենապատիւ Տէր Տեղակալի առաջարկով յետաձգուեց յառաջիկայ նիստերից մէկում քննարկելու, որպէսզի աշխարհական պատգամաւորներն էլ հնարաւորութիւն ունենան ուսումնասիրելու Սահմանադրութեան նախագիծը։ Ապա, ատենապետ Աւետիք Իսահակեանի հրաւէրով, ժողովը վարեց ատենապետութեան անդամ Եգիպտոսի պատգամաւոր Պր. Ճանիկ Ձագըրը։

Այնուհետև ժողովը անցաւ օրակարգի միւս խնդրին, այն է Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի պահպանման հարցի քննութեանը։ Խօսք առաւ Ամեն. Տ. Տեղակալը և մանրամասն տեղեկութիւններ հաղորդեց Ճեմարանի ուսման ծրագրի և յարակից խնդիրների մասին. չեշտեց նաև Ճեմարանը նիւթական միջոցներով ապահովելու անհրաժեշտութիւնը։

digitised by A.R.A.R.@

Գեր. Տ. Արտաւազդ Արքեպիսկոպոսը կարդաց Հոգևոր ճեմարանի 1945–46 ուսումնական տարուայ ծախքերի 1.150.000 ռուբլու հասնող նախահաշիւը։

Ամենն. Տ. Տեղակալը յայտնեց, որ Սովետական բարեխնամ կառավարութիւնը թոյլատրել է Մայր Աթոռին ունենալու նաև իր սեպհական տպարանը, և որ ամբողջ Սովետական Միութեան մէջ դա առաջին կրօնական տպարանի արտօնութիւնն է, որը պէտք է բարձր գնահատել։

Ժողովը խանդավառ ծափահարութիւններով իր գոհունակութիւնը յայտնեց Տեղ. Սրբազանին այդ յաջողութեան առթիւ։

Կարճառև դպրոցից յետոյ ճանիկ Զագըրի ատենապետութեամբ ժողովը շարունակուեց և քննութեան առնուեց Ս. Էջմիածնի պիւտճէի խնդիրը. կարծիքների փոխանակութիւնից յետոյ ժողովը ընդունեց Տ. Վազգէն Վարդապետի և Պր. Եղիշէ Փափազեանի ներկայացրած հետեւեալ բանաձևը.

«Քննութեան առնելով Ս. Էջմիածնի մշտական և արտակարգ ծախքերին վերաբերող պիւտճէի հարցը, ինչպէս նաև արտասահմանի և Միութեան թեմերից նիւթական միջոցների հայթայթման լաւագոյն միջոցառումների կարևորութիւնը, ժողովը միաձայն որոշեց յանձնաժողով կազմել, բաղկացած իւրաքանչիւր թեմի պատգամաւորների կողմից ընտրուած մէկական ներկայացուցիչներից, և յանձնարարել նրան Մայր Աթոռի բոլոր կարիքները պարզել և պիւտճէն կազմել»։

Կիլիկիայի Վեհ. Կաթողիկոսը յատուկ զեկուցումով պարզաբանեց Հայրապետական Աթոռի Սսից Էջմիածին փոխադրելու հինգհարիւրամեակի տօնակատարութեան անհրաժեշտութիւնը, որի մասին գրաւոր առաջարկութիւն էր մտցրել ակադեմիկոս Ստեփան Մալխասեանը։ Ժողովը լսելով Պրոֆ. Աշոտ Աբրահամեանի և Ստեփան Մալխասեանի լուսաբանութիւնները, ընդունեց Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի առաջարկած հետեւեալ բանաձևը. «Անդրադառնալ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետութեան կատարած դերին այդ 500 տարուայ ընթացքում, նշանակում է սրել և լուսաւորել ժողովրդի միտքը, նրա ուշադրութիւնը բևեռելով այդ երկարատեւ շրջանի պատմութեան վրայ. այս մտքով ժողովն օգտակար է համարում և որոշում 1945–1946 տարին յայտարարել Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռի վերահաստատման յոբելինական տարի, ընդունելով միաժամանակ, որ Կիլիկիոյ կաթողիկոսութեան յարատևութիւնը նոյն ժամանակի ընթացքում ոչ միայն չի խանգարել Եկեղեցու միասնականութեան գաղափարին, այլև նման դեր է կատարել ազգապահպանութեան գործում իրեն ենթակայ թեմերի մէջ, ինչպէս և Երուսաղէմի ու Կ. Պոլսի պատրիարքութիւնները»։

Ժողովը փակուեց ժամը 3 և 30 րոպէին, յաջորդ նիստը վաղը Յունիսի 20-ին, ժամը 11-ին գումարելու որոշումով։

Ազգային–Եկեղեցական Ժողովի Նախագահ՝

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՑ

Ատենապետներ՝
Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ
Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆ
ՃԱՆԻԿ ԶԱԳԸՐ
ՀԱՅԿ ԳԱՎՈՒԻՔՃԵԱՆ

Քարտուղարութիւն՝
ԳՐԻԳՈՐ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ
ՍԱՀԱԿ ԱՒ. ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆ
ՎԱՀԱՆ ԱՒ. ՔԱՀ. ԹԱՎԱՐԵԼԿԵԱՆ
Ա. Գ. ԵԱՋՐՃԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ ԵՒ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Շաբաթ, 7 Սեպտ. 1946 երեկոյեան ժամը 8-ին Y. M. C. A.-ի հանդիսասրահին մէջ տօնուեցաւ Հ. Բ. Ը. Միութեան հիմնադրութեան քառասնամեայ յոբելեանը, նախագահութեամբ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր եւ կազմակերպութեամբ Երուսաղէմի մասնաճիւղին:

Հանդէսը սկսաւ Միութեան քայլերգով, որմէ վերջ մասնաճիւղին արժանայարգ առենապետը Պր. Լեւոն Գէորգեան բաւական խօսքը, տեղեկացնելով բացառիկ հանգամանքը եւ կատարած նախապատրաստական դերը Հ. Բ. Ը. Միութեան, որուն քառասուն տարիներու ազգանուէր գործունէութիւնը, ըսաւ, արժանի են բոլոր գնահատանքի եւ երախտագիտութեան: Եղան երգեր ՀԵՄ-ի երգչախումբի կողմէն, ղեկավարութեամբ Պր. Գրիգոր Մանուսեանի, արտասանութիւններ բրնի Պրնի. Նազարէթ Կիւլվանեսեան եւ Կարապետ Եսայեան: Քաղդրտրեն մեներգեցին Օր. Անգինէ Քէշիշեան եւ Օր. Արուսեակ Պասանեան. իսկ դաշնակի վրայ խիստ նարտարութեամբ կատարեր նուագեց Օր. Զուարթ Սարգիսեան:

Քառասնամեայ յոբելեանին առիթով խօսք առաւ նախ, Միութեան Երուսաղէմի մասնաճիւղին ժրաջան առենադպիրը Պր. Կարապետ Միհրանեանը, եւ արտագին ու ամփոփ բրաւ Միութեան ծննդոցը եւ տուաւ այն գլխաւոր հանգրուանները ուր այս պատուական Միութիւնը գիտցաւ ինքզինքը իրագործել, վեր մնալով միտ մասնակի եւ խմբակցական ոգիէ եւ նուիրուելով ընդհանուրին:

Երկրորդ բանախօսն էր Դեր. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, որ խօսեցաւ Բարեգործական ոգեղէն տուրջ, յայտնելով իր հիացումը անոնց՝ որոնք ոգեցան եւ իրագործեցին այս ազգանուէր Միութեան քառասուն տարիները: Երրորդ բանախօսն էր Պր. Բարունակ Թովմասեանը որ Երուսաղէմի մասնաճիւղին հրաւէրով՝ Պէյրութէն կուգար իր ձայնը խառնելու յոբելինական այս արտագին արտայայտութեանց: Պր. Թովմասեանը խօսեցաւ Միութեան ցարդ կատարած հաւատարիմ գործունէութեան շուրջ, որուն իբրեւ հաւատարիմ, Միութեան կը վստահուի, ըսաւ, ազգանաւանման այս պատմական օրերուն, ամենեն աւելի դերերէն մին: Ապա անդրադարձաւ ներգաղթին, եւ արտագին ու կուռ զգացումներով տեսեց մեր կեանքի այս բախտորոշ պահը, շնորհիւ Հայաստանի արդի իմաստուն վարիչներուն, որոնք Հայրենիքը իր վերելքի ճամբուն հանելէ վերջ, չմոռցան նաեւ պանդուխտ սփիւռքը:

Ապա ընդհանուր խանդավառութեան մէջ խօսք առաւ Ս. Աթոռոյս Գահակալը Ամեն. Տ. Կիւրեղ Ս. Պատրիարքը, դրուատեց եւ օրհնեց նախ յիշատակն ու անունը Միութեան հիմնադրին, յաւէս անմոռաց, Պօղոս Նուպար փաշայի, ու շատ գեղեցիկ նմանաբերութեամբ մը, ըսաւ թէ մեծանուն հայրենասէրը Նեղոս մը բացաւ մեր ազգային կարիքներու դաշտին մէջ, եւ թէ ինչպէս 40 տարիներէ ի վեր անոր ջուրերը իրենց բարիքը կը գործեն բոլոր հայ կեանքին վրայ, ու այսօր կ'երթան աւազանուելու մեր սիրելի Հայրենիքին մէջ: Խօսեցաւ Հայ Եկեղեցւոյ եւ Բարեգործական սեռ եւ սեռն բարեկամութեան շուրջ եւ տուաւ պատճառները անոնց նպատակներու նոյնութեան եւ ներքին զգացումներուն: Ու աւելցուց թէ Հայ Եկեղեցին եւ եկեղեցականը չէին կրնար չսիրել Բարեգործականը՝ բարեսիրական ու հայրենասէր այս Միութիւնը որ իբրեւ գեղեցիկ սկզբունք ունի «Հայը՝ Հայով, Հայուն համար»:

Ապա տիրական խանդավառութեան մը մէջէն Ս. Պատրիարք Հայրը բացուած յայտարարեց ներգաղթի համար Հ. Բ. Ը. Միութեան ձեռնարկած մէկ միլիոն տոլարի հանգանակութիւնը, հրաւիրելով որ ներկաները բերեն իրենց արտագին մասնակցութիւնը այս յոյժ ազգանուէր ձեռնարկին:

Հ. Բ. Ը. Միութեան անցնող 40 տարիներուն վրայ յեսադարձ ակնարկ մը՝ յոբելինական այս առիթով, պարծանքով եւ երախտագիտութեամբ կը լեցնէ մեր սիրտը: Անոր գործունէութեան մէջ սխալներ եւ թերացումներ եղան անշուշտ, վարիչներուն իսկ վկայութեամբ, սակայն վստահութեամբ կրնանք ըսել եթէ բաղդատութեան փոքր մը կատար-

digitised by A.R.A.R.@

ուի այս պատուական կուսակցութեան եւ միւսներուն միջեւ, գերազանցութեան դափնին պիտի պատկանի Հ. Բ. Ը. Միութեան: Նմանօրինակ ուրիշ ո՛չ մէկ ազգային հիմնարկութիւն արժեցուցած է առողջ եւ բեղմնաւոր կենսունակութիւնը այս «փոխրիկ հանրապետութեան», եւ պայծառ թափանցողութիւնը այս «ապակէ տան», — ըստ բացատրութեանց Միութեան իմաստուն հիմնադրին, Գէորգ Փաշա Նուպարի:

Ու քառասուն տարիներ վերջ՝ երբ կը նայինք իր արդիւնքին, իր կազմակերպած եւ մատուցած բարիքներուն, կ'ըսենք ի սրտէ թող օրհնուի յիշատակը իր հիմնադրին, եւ բոլոր անոնց՝ որոնք ջանացին եւ նիւթեցին բարիքը: Չեղաւ ապէս մը որուն չնասներ, չեղաւ կարիք մը ճնշեսական եւ կրթական, որուն իր իբեանական բաժինը չբերեր Հ. Բ. Ը. Միութիւնը:

Բարեգործակաը միայն չգանձեց, այլ իր գանձումները կազմակերպեց նորագոյն թէքնիկով, բազմապատկելով զանոնք ճանաչման նոր մեթոտներու համաձայն: Այսկերպ իր մէջ կը համադրուին հին եւ նոր ձեւերը, այսինքն Բարեգործակաը կը կատարէր ազգատախնամի, կսակարարի եւ պանքայի դերերը միանգամայն:

Ուրախաւիթ ուրիշ պարագայ որ կը տեսնենք Հ. Բ. Ը. Միութեան քառասնամեակը մեծ յոյսի մը եւ յոյսի մը մէջ, որ Հայրենիքին ճառագայթումն է մեր բոլորին վրայ: Ցարդ կարիքներու եւ կրաւոր օգնութեան ձեւով բաշխուած իր նպաստներ, այսօր կը ղեկավարուին գերագոյն ստեղծման տպնապով, ասիկա փոխադրութիւնն է մեր բոլորի բազուկներուն եւ ուժերուն Հայրենիքին մէջ:

Բարեգործակաը պատմութեան չէ անցած, անիկա իր նորոգուած գործունէութեան ամենէն տաք եւ բախտաբեր օրերն է որ կ'ապրի, հիմը դնելով յեռ այսու ստեղծագործ բարիքին, օժանդակ ունենալով մեր Գէորգութիւնը:

Օրհնեալ ըլլան սերմնացանն ու սերմանողները այս մեծ Միութեան:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ԲՆՄԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ

✱ 24 Օգոստ. Երբ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ Ս. Պատարագը մատոյց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, և քահանայական ուրբաստիճանը շնորհեց բարեշնորհ Տիգրան և Սարգիս սարկաւագաց:

— Երեկոյեան Վերափոխման տօնին առթիւ Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը «Հրաշափառաւոր մուտք գործեց Ս. Աստուածածնի Տաճարը:

✱ 25 Օգոստ. Կիր. — Վերափոխման տօնին առթիւ Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը «Հրաշափառաւոր մուտք ըրաւ Ս. Աստուածածնի Տաճարը և ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին:

— Երեկոյին, ժամերգութենէն վերջ, Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը նորընծայ աբեղաներու վեղարի տնչութիւնը կատարեց և քարոզեց այդ առթիւ բնաբան ունենալով «Ուստի եղբարք ուրբք ընդ առաքեալն և ընդ քահանայապետն խոստովանութեան մերոյ ընդ Յիսուսի Քրիստոսի:

✱ 28 Օգոստ. Դշ. — Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը այսօր իսլամաց պայրամի առթիւ շնորհաւորութեան այցելութիւն տուաւ հետեւեալներուն. Իսլամաց Գերագոյն ժողովի նախագահին, Վեհմ. Նաշաշիպի և Վեհմ. Բանի Գէյերուն, Գեազիմ Փաշայի զաւակաց, Իրանի, Իրաքի, Եգիպտոսի, Թուրքիոյ, Պաուսական արաբիայ և Սուրիոյ Վեհմ. Ընդհ. Հիւպատոսներուն:

✱ 7 Սեպտ. Շբ. — Երեկոյին, Ամենապատիւ Սրբ. Պատրիարք Հայրը նախագահեց Հ. Բ. Ը. Միութեան Քառասնամեայ Յոբելինական տօնակատարութեան հանդէսին որ տեղի ունեցաւ Y. M. C. A.ի հանդիսասրահին մէջ, կարգադրութեամբ Երուսաղէմի Հ. Բ. Ը. Միութեան Մասնաճիւղին: Այս առթիւ կատարուեցաւ ներբողքի հանգանակութիւն:

✱ 20 Սեպտ. Ուր. — Ամեն. Սրբ. Պատրիարքին այցելեց Գրոյզնի անգլիացի եպիսկոպոսը, ընկերակցութեամբ Երուսաղէմի անգլիական եպիսկոպոսի փոխանորդ Աբլէրի Մաքինէնի:

✱ 29 Սեպտ. Կիր. — Ցօն Վեռացման Սրբոյ Խաչին. Երեկ երեկոյ, Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը նախագահեց Վերացման Ս. Խաչի նախատօնակին: Իսկ այսօր ի Ս. Յակոբ հանդիսաւորապէս Ս. Պատարագը մատոյց և քարոզեց բնաբան ունենալով «Ես ես յորժամ բարձրացայց յերկրէ զամենեսին ձգեցից առ իս»:

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hagop Vartanian, Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@

ԴՈՒՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՊԱՂ. ԴԱՀ.

1. Եղիշէ Պարիսարէ Դուրեան, (իր Բանանցայութեան Յիսնամեայ Յոբելեանին առթիւ), *Թարգմ. Աբգենս.*, տպ. 1932, էջ 328. —
2. Պատմութիւն Հայ Մատենագրութեան, *Եղիշէ Պարիսարք Դուրեան*, տպ. 1933, էջ ԺԱ + 463. 15
3. Հայոց Հին Երգը կամ Հայկական Դիցաբանութիւն, *Եղիշէ Պարիսարք Դուրեան*, տպ. 1933, էջ 159. 10
4. Ազգային Պատմութիւն, *Եղիշէ Պարիսարք Դուրեան*, տպ. 1934, էջ 478. 15
5. Համառօտ Պատմութիւն Փիլիսոփայութեան, Պղատոնի Եւ Իսկն, *Գուարք, Թրգմ. Եղիշէ Աբգենս. Դուրեան*, տպ. 1934, էջ Լ + 187. 7½
6. Դասական Մատենագրութիւն, *Եղիշէ Պատ. Դուրեան*, տպ. 1935, էջ Զ + 86. 5
7. Ուսումնասիրութիւնք եւ Քննադատութիւնք, *Եղիշէ Աբգենս. Դուրեան*, տպ. 1935, էջ ԺԱ + 575. 20
8. Երգնիրու Պատմութիւն, *Եղիշէ Պատ. Դուրեան*, տպ. 1935, էջ ԺԶ + 422. 15
9. Բարոյագիտութիւն, *Եղիշէ Պատ. Դուրեան*, տպ. 1936, էջ 114. 5
10. Արքազն Քնար, *Եղիշէ Պարիսարք Դուրեան*, տպ. 1936, էջ ԻԱ + 575. 30
11. Արեւելեան Աշխարհակալքը եւ Հնարէկը, *Գիւտ Եպս.*, տպ. 1937, էջ 236. 15
12. Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիներ եւ վանական շինութիւններ, *Մեսրոպ Մագիստրոս Աբգենս. Տէր Մովսիսեան*, տպ. 1938, էջ Լ + 125. (Պատկերազարդ). 15
13. Օրագրութիւն երեմիա Չէլեպի Քէօմիւրճեանի եւ Ցաւելուած, (ա. Թուղթեր, բ. Ուղերձներ, գ. Գանձեր եւ Ողբեր), *Հրատարակեց՝ Մեսրոպ Աբգենս. Նշանեան*, տպ. 1939, էջ ՃԻԹ + 715. 20
14. Պաւղիկեանցի Բիւզանդական կրօնագրութեան մէջ եւ մեծաւոր հերձուածային երեւոյթներ Հայաստանի մէջ, *Նարապետ Թրկ. Տէր-Մկրտչեան, Թրգմ. Գերմաներէնէ Ա. Աբեղեան*, տպ. 1938, էջ ԻԹ + 295. 12
15. Առաքեալց Շաւիղով, Պիրակնորեայ խորհրդածութիւններ Տէրունական օրերու Աղաղիղական ընթերցումներու առթիւ, *Թարգմ Գար. Գուշակեան*, տպ. 1939, էջ Ը + 239. 10
16. Սուրբ եւ Տօնի Հայաստանեայց եկեղեցւոյ, *համառօտ տեղեկութիւններ Հայաստանեայց եկեղեցւոյ տօների Սուրբերու եւ Տէրունական տօներու մասին, Թարգմ Պարիսարք Գուշակեան*, տպ. 1939, էջ ՃԻ + 372. 10
17. Պերճուածներ, քարգմնածոյ եւ ինքնագիր, *Թարգմ Գար. Գուշակեան*, տպ. 1940, էջ Ժ + 224. 10
18. Բարեկարգութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ, *Թարգմ Պարիսարք Գուշակեան*, տպ. 1940, էջ 171. 10
19. Քարոզներ, *Թարգմ Պարիսարք Գուշակեան*, տպ. 1940, էջ 280. 10
20. Մագդաղինէն Մեղրամովէ, (*Քերթուածներ*). *Եղիվարդ*, տպ. 1941, էջ 135. 10
21. Հնդկահայք, տեղեկութիւններ եւ տպաւորութիւններ, *Թարգմ Պարիսարք Գուշակեան*, տպ. 1941, էջ Ը + 382. (Պատկերազարդ). 15

Ազգապատում, Գ. հատոր, *Մաղաքիա Աբգենս. Օրմանեան*, տպ. 1927, էջ ԺԵ + 3377, երեսիւն: *Երեք հատորը միասին՝* 450
Այրուէնցի հայերէն քանասիրութիւն, *Եղիշէ Պատ. Դուրեան*, տպ. 1928, էջ 72. 3
Ճանի եւ Խոսք, *Օրմանեան Պարիսարք*, տպ. 1929, էջ Ը + 503. 20
Պատմութիւն Տրապատէնի, Ց. Հ. Թ. Սաւալանեանց, (*երկու հատոր*), տպ. 1931, էջ ԼԹ + 1387. 30
Հոգեբանութիւն, George L.-Fonsegrive, *Թրգմ. Թ. Ե. Գ.*, տպ. 1932, էջ ԺԶ + 391. 15
Խորակիմն Գիշերներ, *Եղիվարդ*, տպ. 1943, էջ Ժ + 119, Հեմ Մատենաշար, *թիւ 1*. 20
Հայրապետական կամ Պաղեստինի Հայոց Պատմութիւն մէջ, մասն երկրորդ, *Հոգեւոր Կեդրոններ եւ Դիւաղարի Բարձր Դպրոցը՝ Պաղեստանց իշխանութեան մէջ, Գաբրիէլ Աբգենս. Յովսէփեան*, տպ. 1942 [1944], էջ 292, երեսիւն: (Պատկերազարդ). 60

digitised by A.R.A.R.@

Համառպակեր Աբեմճանայ Գրականութեան, Առաջին հատոր, Ջարթօնքի Սերունդ, Ց. Ոշական, տպ. 1945, էջ Ե + 365։ 60

Սփիւռք եւ Իրաւ Բանասէրներ։ Վ. Թէրեանի ապիրով), Ց. Ոշական, տպ. 1945, էջ 8 + 111։ 30

Ցրիւ Բիրբաւածներ, Կարմիր գիրք, Սիրոյ գիրք, Ռուբէն Սեւակ, տպ. 1945, էջ ԺԶ + 160։ 15

Մուր Ցաւեր, (Բերթուածներ), Կ. Ց. Կարապետեան (Անել), տպ. 1945, էջ ԺԵ + 109։ 20

Լեռան Վրայէն, Եղիշէ Վրդ. Տէրէրեան, տպ. 1945, էջ 118, Հեմ Մատենաշար, Թիւ 2։ 25

Անցարդը, (Բերթուածներ), Եղիվարդ, տպ. 1946, էջ 110։ (Պատկերազարդ)։ 50

Սիրեմ խաւրի, Ալոբագիրք, Զ. տպ. 1933, էջ 494։ 15

Թնճիկնենագրութիւն Բարթողիմէոս Ծ. Վրդ.-ի, տպ. 1933, էջ ԺԵ + 332։ 15

Խորհրդաւոր Սուրբ Պատարագի, Դ. տպ. 1927, էջ 40, (կազմուած)։ 35

Կարիւն, Վարժ Մաքրոցի, Գառնիկ Ենոգլեան, տպ. 1930, էջ Թ + 101։ 20

Համաբարբառ Հին եւ Նոր Կտակարանաց, տպ. 1895, էջ ԺԲ + 1577։ 75

Հայ Եկեղեցի, Բաթգէն Եպս., տպ. 1930, էջ 355։ 5

Հայկական Երաժշտէմ, Ցրմանեան Գաւրիթաբեր, տպ. 1931, էջ 207։ 5

Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ, տպ. 1931, էջ ԻԴ + 480։ 15

Ճանապարհ երկնից, Ը. տպ. 1907, էջ 299։ 8

Մաշտոց, [Միսարան], Ե. տպ. 1933, էջ 540։ 35

» » [Սարգ Թաղման], տպ. 1896, էջ 300։ 30

Միաբանք եւ այցելուք հայ Երաժշտէմի, տպ. 1929, էջ ԺԶ + 514։ 10

Մշակն ու վարձքը, Ցորեկնական հրատարակութիւն ի յիշատակ Ամեն. Տաւրեան Տ. Եղիսէ Ս. Պատրիարքին Երաժշտէմի յնգամեայ հանանայութեան յոբելեանին, 1879-1929, տպ. 1931, էջ Զ + 384։ 25

Ցուշարձան Աստուածաշունչի Հայերէն Թարգմանութեան Հազարհինգհարիւրամեակի, տպ. 1938, էջ 560։ 15

Նարեկ, գրաբար, Դ. տպ. 1936, էջ 779։ 30

» » աշխարհաբար վերածեց Թորգոմ Եպիսկոպոս, Բ. տպ. 1931, էջ 627։ 30

Նեարկանական Արեւելեան Հնդկաստանեայ գաղութի պատմութիւնը, Ցորդ. Տէր Կ. Ցորդանանեան, տպ. 1937, էջ 220, (պատկերազարդ)։ 10

Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ Հայ Բարեսէր եւ Մշակոյթի Պատմութեան, Գարեգին Արքեպս. Յովսէփեանց գրչ. 1935, էջ 76, (պատկերազարդ)։ 25

Ճարտկան ձայնեղ, տպ. 1913, էջ 513, (կիսազմուած)։ 300

» » Ծեռաց, տպ. 1936, էջ 1061, (կազմուած)։ 60

Ուղեցոյց Սուրբ Տեղեաց, Զ. տպ. 1910, էջ 415։ 8

Պատմութիւն Թարարոց, տպ. 1870, էջ 76։ 2

Պատմութիւն Լենկթիմուրայ, տպ. 1873, էջ 288։ 5

Պոդիկոս, տարաչափեալ, Թրգմ. Թորգոմ Արքեպս. Գուշակեանի, տպ. 1935, էջ 90։ 10

Ս. Ցարութեան Տաճարը եւ Քրիստոսի Ս. Գերեզմանը, Գարգեն Վրդ. Վրթանէսեան, պատմական, տեղագրական, նկարագրական ուսումնասիրութիւն, տպ. 1946, էջ 48, (պատկերազարդ եւ քարտիսաւոր)։ 20

Սիոն ամսագիր, Նոր չրջան, 1927-1946, Լրաքանչիւր տարին՝ 30

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, հայատառ տակերէն, Զ. տպ. 1928, էջ 147։ 4

Սուրբ Երկրին Սրբավայրերու ուղեցոյցները, Մկրտիչ Եպս. Աղաւնունի, տպ. 1936, էջ ԺԷ + 459։ 15

Տաղարան, Դ. տպ. 1907, էջ 340, (կազմուած)։ 30

Տեսակ զոլատանաց ի վերայ տնօրինական սուրբ ուխտաբերգեցն Քրիստոսի, Երկու մաս, Երկրորդը՝ հայատառ տակերէն, ԺԲ. տպ. 1914, էջ 120։ 5

Տօնացոյց, Երկու հատոր, Դ. տպ. 1915, էջ 565, (կազմուած)։ 35

Տուգակ հոյերէն ձեռագրաց Ս. Գրասանն Մանկանէ եկեղեցոյ Հալէպի եւ մասնաւորաց, Արտաւազդ Արքեպս. Սիւրմէեան, տպ. 1935, էջ ԻԲ + 415, Երեքէն։ 100

Փոքրիկ բառոյկան առասծեներու, Եղիշէ Եպս. Զարինկիրեան, տպ. 1928, էջ 112։ 5

Քրիստոսի Հարցարանաց վերայ խորհրդածութիւններ, Աւետիս Վրդ. Յովհաննէսեան, տպ. 1906, էջ 171, (կազմուած)։ 8

digitised by A.R.A.R.@